№ 4 (192) XVIII ՏԱՐԻ ԱՊՐԻԼ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԳՐԱԴ A.R.F. D LIBRA

ԱՐՋԻ ԹԱԹԸ

Նորէն թափով հրապարակ նետուեց այդ ֆատալ ու քստմնելի ոյժը, որ իր երկրում ազատութիւնը խողխողելով, չի ուզում տեսնել այն՝ ոչ մի ուրիշ տեղ։ Ռուսաստանը դարձեալ թուրք կանգնեց մակեդոնական ազատագրութեան առջև... Դժբախտ երկիրը մի վայրկեան ցնցուեց ուրախութիւնից, երբ յայտնի եղաւ Անգլիայի որոշ ու յստակ առաջարկը՝ նշանակել Մակեդոնիայի վրայ մի գեներալ-նահանգապետ, յայտնի ժամանակով և պատշաճ լիազօրութիւններով, ընտրուած անպայման մեծ պետութիւնների համաձայնութեամբ և փոփոխելի դարձեալ միայն նրանց հաւանութեամբ, ապա նուազեցնել տաճկական բանակը Մակեդոնիայում, հասցնել նրան իր մինիմումին։ Թւում էր թէ հասեր է, վերջապէս, լուրջ բարենորոգման ու խաղաղացման շրջանը և որ մակեդոնական հարցը երկար ժամանակով լուծուած է։

Բայց արջի թաթը նորէն վրայ հասաւ և պաղ ջուր մաղեց ընդհանուր ոգևորութեան վրայ։ Ցարի կառավարութիւնը յայտարարեց, որ համաձայն չէ բրիտանական առաջարկի հետ և նա շուտով ասպարէզ նետեց իր հակա-նախագիծը։ Դէպքին տրուեց նոյն իսկ որոշ հանդիսաւորութիւն։ Իզվոլսկին արտասանեց պետական դումայում մի ֆանֆարոն ճառ, մեծամասնութեան բուռն ու խրախուսէչ ծափահարութիւնների մէջ։ Մի աւելորդ անգամ խօսեց նողկալի փարիսեցութիւնը ռուս դիպլոմատի բերանով։

„Ռուսաստանը սկզբունքով համաձայն է անգլիական առաջարկի հետ, բայց յոյս չունի թէ սուլթանը կընդունի այն"... Ուստի Ռուսաստանը սուլթանական բծախնդրութիւնները յարգելով, առաջարկում է աւելի մեղմ, չափաւոր միջոցներ...

Նոր նահանգապետ չի նշանակուի, Հիլմի փաշան կը շարունակէ իր պաշտօնը։

Տաճկական զօրքը չի կրճատուի Մակեդոնիայում, նա պէտք է ուժեղ լինի, որպէսզի կարողանայ աջողութեամբ մաքառել հրոսակային խմբերի դէմ։

Ժանդարմերիան պէտք է աւելանայ։ Խաղաղարար մարմնի մէջ կը լինին այսուհետև—սուլթանի համաձայնութեամբ—բացի աւստրիական ու ռուսական գործակալներից՝ նաև ֆրանսիական, գերմանական, անգլիական ու իտալական գործակալներ։

Քաղաքացիական այդ բոլոր գործակալները կը մտնեն տաճկական ծառայութեան մէջ։ Սուլթանը այդպէս է կամենում, պէտք է խնայել նրա վեհապետական իրաւունքները...

Այսպէս է տնօրինում հիւսիսային բռնապետութիւնը մի արիւնաշաղաղ ժողովրդի, այն էլ ցեղակից ժողովրդի, քաղաքական ճակատագիրը։ Եւ ի՞նչ ասել կուզէ—Գերմանիա, Աւստրիա, Նոյնիսկ Ֆրանսիա, Իտալիա, շտապում են—մի գարշելի համակերպութեամբ արձագանք տալ ռուսական յայտարարութիւններին... Ռուսաստանի ձայնը դարձեալ ճնշում է ու գերակշռում. արջի թաթը դարձեալ մնում է գերագոյն իրաւարարը արևելեան մեծ ողբերգութեան մէջ—ահա այն տխուր եզրակացութիւնը, որ բղխում է վերջին դէպքերից։ Անգլիան միանգամ ևս կղզիացաւ, նրա ծրագիրները միանգամ ևս ջուրն ընկան։

Այդպիսով Մակեդոնիայի խաղաղարարը կը մնայ նոյն սուլթանի մարդը, նրա հաւատարմատարը, մի Հիլմի փաշա իր ստուար բանակով ու ընդարձակ լիազօրութիւններով։ Ինչքան կուզեն թող նոր ու համակրելի ըէֆօրմներ ծրագրեն—գիւղական պահակներ և այլն—նրանց արժէքը միշտ կասկածելի է, քանի որ Հիլմին կը մնայ իր պաշտօնում։ Ինչ վերաբերում է եւրոպական ուժեղացրած ժանդարմերիային,—նա էլ անկարող լինելով զգալի դարման հասցնելու երկրի անհամար չարիքներին, պիտի դառնայ մի նոր բացասական ոյժ, մի պատնէշ, որ ամեն կերպ պիտի արգելք լինի ազատագրական շարժումների տարածմանը Մակեդոնիայում։

Միջազգային կռիւները դադարեցնելու պատրուակով, „հակահրոսակային պատերազմի" դրօշակի տակ՝ եւրոպական ուժեղացրած ժանդարմերիան և ամբողջ հասարակական գործակալութիւնը պիտի ձգտեն խեղդելու նաև բուն մակեդոնական կազմակերպութիւնների ազատարար ձիգերը... Դա մի նոր դաւ է յեղափոխութեան դէմ, տաճկական Արևելքում։ Դա մի նոր փոքրիկ „Սուրբ Դաշնակցութիւն" է, որի առաջնորդն ու դրօշակակիրը նոյն տխրահռչակ համաշխարհային ժանդարմն է,—ցարիզմը...

Ողբալի է, որ ռուսական կադետները անգամ մի

խօսք չը գտան պարսաւելու իրենց կառավարութեան այդ վատ ընթացքը. ընդհակառակը ծափահարութեամբ ընդունեցին Իզվոլսկու յայտարարութիւնները։ Նրանք, կարծես գոհ են, որ Ռուսաստանը ջուրը գցեց անգլիական միակ համեմատաբար խելացի ծրագիրը՝ Մակեդոնիան բարենորոգելու համար և նրանց օրգանները դեռ քաջութիւն ունեն այդ առթիւ իսկ ներբողել Ռուսաստանի մինչև օրս մղած quasi—վեհանձն, „անշահախնդիր“ քաղաքականութիւնը թիւրքական արևելքում...

ԿԷՍ-ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հաշտուել են Դուման և կառավարութիւն, երկուսի միջև տիրում է սրտաշարժ համերաշխութիւն... Որովհետև իրագործուած է մահամերձ բռնակալութեան դերագոյն տենչը,—Դուման հնազանդ է, խաղաղ անվընաս,—աւելի „լաւը“ դժուար է երևակայել։ Սակաւապահանջ մարդիկ են նստած երրորդ Դումայում. նրանք գոհ են և պարզ, ամուլ վիճաբանութիւններից, միայն թէ չը լինեն խռովայոյզ միջադէպեր, նրանք ոգևորւում են և թմբուկ զարկում, որ արտաքին գործերի մինիստրը բարեհաճում է մի քանի խօսք ասել Տաւրիկեան պալատում, ռուսաց արտաքին քաղաքականութեան մասին.. Ահա այդ խղճուկ զիջողութիւններն են, որ որոշում են Ռուսաստանի „սահմանադրութեան“ սահմանները..

„Կրամօլան“ յաղթահարուած է և կարգը ընդմիշտ վերահաստատուած“—այսպէս են, անշուշտ, տրամաբանում պետերբուրգի որոշ շրջաններում։ Եւ քաջալերուած նոր-նոր՝ ծրագիրներ են որոճում նրանք յետադիմական ուղղութեամբ։ Դումայի դէմ այլևս չեն կուսում. անմիտ բան կը լինէր. եթէ կայ մի քիչ խըստապահանջ փոքրամասնութիւն՝ նրան էլ հեշտութեամբ խոնարհեցնում է ճնշող ու յանդուգն մեծամասնութիւնը։ Կադետներն անգամ ենթարկւում են բանադրանքի, հրատարակւում են իբր պետութեան թշնամիներ և նրանց մուտքը արգելւում է ներկայացուցիչների այն ժողովի մէջ, որը կոչուած է խորհելու պետական պաշտպանութեան միջոցները։ Այդպէս հանդիսաւոր ու կոպիտ կերպով ոտնակոխ է լինում ներկայացուցչի տարրական իրաւունքը և զոհերը մի քանի թոյլ ճիչ արձակելով, համակերպում են ու պատրաստւում նոր-նոր ապտակներ ստանալու։

„Կրամօլան յաղթահարուած է“—ոգևորութիւնով շփում են իրենց ձեռները Ցար, Ստոլիպին ու մեծ իշխաններ և արշաւում են արդէն այն խղճուկ իրաւունքների դէմ, որ նրանք զիջել են նեղ բոպէներին, ահաբեկուած և խելակորոյս մի վիճակում։ Ֆինլանդիան օր աւուր դառնում է ճնշող մտահոգութեան առարկայ. նա խիստ ցուցարար ձևով է օգտւում իր ազատութիւնից, նա գումարել է ամենառատկավար պարլամենտը, որ գոյութիւն ունի ներկայ աշխարհում, նա ապաստան է տալիս ռուս յեղափոխականներին, տերրորիստներին։ Եւ ահա կարմիր, արիւնոտ թաթը երկչոտ փորձեր է անում նորից տարածելու ֆինլանդական ապառաժների վրայ։ Ամեն բան հնարաւոր է մի երդմնազանց ու անչափահաս վեհապետի համար։ Սաստիկ նեղում են և կիսազատ խօսքի, մամուլի գրականութեան „թռիչքները“—այն էլ պէտք է փոքր առ փոքը կրճատել, և ահա ցենզուրան հետզհետէ ճարակում է և սկսւում են նոյնիսկ անվերջ խուզարկութիւններ գրադարաններում ու գրավաճառանոցներում՝ մաքրելու համար „անբարեյոյս“ գրուածքներից...

Ռէակցիայի ամբարտաւանութիւնը հասնում է այն աստիճանին, որ ցարը վերստին նետում է պրօվոկատօրական իր ձեռնոցը Ռուսաստանի ժողովուրդներին, ընդունելով իր պալատում յայտնի խուլիգանապետ Դուբբրովինին, որ „իսկական ռուս մարդկանց“ ընկերութեան նախագահն ու պարագլուխն է և գլխաւոր կազմակերպողն ու ներշնչողը հրէական ամենամեծ պոգրոմների... Այդ հանդիսաւոր ընդունելութիւնը նշան է՞ արդեօք, որ „պոգրոմային քաղաքականութիւնը“ տակաւին չի ասել իր վերջին խօսքը... Ցամենայնդէպս, տարակոյս չը կայ, որ ցարի ու իր շրջապատող իշխանական վամպիրների մէջ դեռ խիստ վառ են խուլիկանական տրամադրութիւնները։ Նրանք գոհ չեն նոյնիսկ Ստոլիպինից, այդ չարաղէտ հանճարից, որ անդադար ու անգթօրէն հնձում է ռուս և այլ ժողովուրդների ծաղիկը,—ոչ. Նրանք կուզէին մի աւելի անողորմ բռունցք, à la Դուբբրովին, որ գործէր էլ անելի վճռականութեամբ և արագութեամբ... Եւ ահա ժամանակ առ ժամանակ լուր է տարածւում Ստոլիբինի մօտալուտ ու „ակամայ հրաժարականի“ մասին...

Սև-հարիւրակեան ուժերը, թէև ներքուստ արդէն բաւականաչափ պառակտուած ու քայքայուած, կորովի աջակցութիւն են ցոյց տալիս բռնապետութեան և շարունակում են քարոզել նրան՝ „դա՛ր դէպի հին ըէժիմը“.. Նրանց օրգանները արծարծում են միշտ „Մեծ ու հզօր Ռուսաստանի“ գաղափարը, որ պահանջում է նրանց ըմբռնումով՝ վերջ տալ, թէկուզ ամենադրակօնական միջոցներով, ներքին կառավարութեան“, „այլազգիների“ հակամարտութեան և բոլոր շատ թէ քիչ ազատամիտ կարգադրութիւններին, որոնք արուած երկու տարուց ի վեր ու այդ եղանակով են նրանք ուզում ներքուստ ուժեղացնել Ռուսաստանը և վերադարձնել նրան վաղեմի արտաքին փայլը։

Սակայն—այս հանդամանքը ևս բնորոշ է թւում պատմա-քաղաքական վայրկենի համար—տարաբախտաբար, այդ ծայրայեղ, ուլտրա—ազգայնական պրօբլեմը զբաղեցնում է ոչ միայն Ռուսաստանի սև-հարիւրակներին, նա արծարծւում է նաև հակառակ բանակում, սահմանադրական „կադետների“ մէջ, որոնք մինչև օրս իրենց գործունէութեան մէջ ծանրացել են գրեթէ բացառապէս ներքին քաղաքական մոմենտի վրայ և մի կողմն են թողել պետութեան „արտաքին հմայքի“, նրա „մեծութեան“ և այլ նման խնդիրները։ Եւ նրանց յայտնի թեորետիկոսն է, Պեոտր Ստրուվէն, գերմանական կարգերի այդ երկրպագուն, որ հարկ է համարում ներկայ կնճռոտ ժամանակաշրջանում—տարբեր, իհարկէ, տեսակէտներով—հրապարակ նետել „Մեծ Ռուսաստանի“ և „ուժեղ սլավոնական

պետութեան“ գաղափարը, երկար ու բարակ քննում է հարցը բանակռիւներ է յարուցանում, որոնք հեռաւոր առնչութիւն միայն ունին ներկայ ցաւոտ իրականութեան հետ և անուղղակի քաջալերանք են ազգայնամոլ ու պանսլավիստ (համասլավօնական) մարդակերներին, քաջալերանք են Ստոլիպինի կառավարութեան։

Այսպէս է ներկայում Ռուսաստանը յեղափոխութեան կէս-ճանապարհին, ի դէմս այն դասակարգերի ու կուսակցութիւնների, որոնք յաւակնութիւն ունին վարելու երկրի ճակատագիրը... Հին Ռուսաստանը չէ, բայց կարծես թէ նորն էլ չէ... Վհատեցուցիչ դանդաղութեամբ է թաւալւում առաջադիմութեան անիւը. երբեմն էլ ասես նա տրամադիր է շուռ տալ դէպի յետ...

Այդպէս էլ, անշուշտ, կը կատարուէր, եթէ այդ դժբախտ առաջադիմութեան դատը յանձնուած լինէր հոկտեմբերեաններին և „կադէտներին“, եթէ նրանք միայն բռնած լինէին գործի ամբողջ հրապարակը։ Նրանք հեշտութեամբ տանուլ կը տային այն համեստ վաստակներն անգամ, որ ձեռք են բերուած ժողովրդական զանգուածների արեան գնով։ Այդ զանգուածներն են, որ քնած չեն։ Նրանք են, որ գերագոյն վերահսկողութիւնն ունին համերկրային ճակատագրի վրայ։ Եւ յաղթանակողը դարձեալ այն մեծ ոյժն է, որ այսօր կազմակերպւում ու մարզւում է թէ „ստորերկրեայ“, աներևոյթ աշխարհում և թէ հրապարակով՝ տնտեսական կուլտուրական աշխատանքի բովում, արհեստակցական բազմաճիւղ միութիւնների, բանւորական ու գիւղացիական համատարած խմբակցութիւնների մէջ։ Այդ ուժը մինչև օրս առատութեամբ դուրս է ժայթքել արիւնահեղ ու ազատարար շառաչումներով. Նա չի խնայի և չի սպառւի, մինչև ազատութեան լիակատար նուաճումը։

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՕՑԻԱԼԻՍՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ութերորդ Նամակ

Անցեալ նամակում ես ցոյց տւի, որ պետութեան եկամուտների մեծ մասը, կազմւում է անուղղակի հարկերից, ցոյց տւի և այն, որ այդ տեսակ հարկատւութիւնը պէտք է վերացւի, քանի որ նա աւերիչ է աշխատաւոր լայն զանգուածների համար, ապա ուրեմն և անարդար է։

Սակայն, վերացնելով անուղղակի հարկերը, պէտք է նրանց փոխարինել մի այլ բանով, այլապէս որտե՞ղ գտնել միջոցներ՝ գոհացնելու համար պետութեան բարդ կարիքները։

Ինչպէս արդէն ասուած է, մեր կուսակցութիւնը առաջարկում է անուղղակի հարկերի տեղ մտցնել կեանքի մէջ պ ր օ գ ր է ս ի վ տուրք եկամուտների ու ժառանգութիւնների վրայ։

Ի՞նչ է նշանակում այդ։ Ի՞նչու չենք ասում պարզապէս եկամտային տուրք, այլ պ ր օ գ ր է ս ի վ—եկամտային։ Ի՞նչ տարբերութիւն կայ այդտեղ։ Փորձեմ բացատրել։

Ենթադրենք, թէ կառավարութիւնը հրատարակում է մի օրէնք, որը յայտարարում է, օրինակ, հետևեալը.

„Ամեն մի քաղաքացի պարտաւոր է իւրաքանչիւր տարի հատուցանել պետութեան կարիքների համար՝ իր տարեկան եկամտի (կամ հասոյթի) ե ր ե ք տ ո կ ո ս ը“։ Դա նշանակում է, տարեկան 500 րուբլի վաստակողը պէտք է վճարէ պետական գանձարանին 15 րուբլի, 5000 վաստակողը 150 րուբլի, 50,000ր. վաստակողը—1500 րուբլի և այլն։ Դա է պ ա ր զ եկամտային տուրքը։

Առաջին անգամից կարող է թւալ, որ այդ տեսակ հարկը միանգամայն արդար է և որ աւելի լաւ ձև անկարելի է հնարել։ Բայց այդպէ՞ս է արդեօք։ Մտածեցէք—արդեօք ա յ դ տ ե ս ա կ եկամտային հարկը ծանր ու ճնշող չէ՞ քաղաքացիների ահագին մեծամասնութեան համար, և միւս կողմից՝ դատարկ բան չէ՞ նա հարուստ ու ապահով մարդկանց համար։ Մի փոքրիկ դատողութիւն օդը կը ցնդեցնէ այդ տեսակ հարկատւութեան կարծեցեալ արդարութիւնը։

Համեմատենք թէկուզ առաջին անգամ երկու քաղաքացիների դրութիւնը, որոնցից մէկն ունի տարեկան եկամուտ 500 րուբլի, միւսը 5,000 ր.։ Առաջինը իր 500 րուբլով հազիւ է կարողանում ծայրը ծայրին հասցնել. այդ գումարը հազիւ հազ բաւականանում է նրա տարրական կարիքների համար—բնակարանի, սնունդի, հագուստի և այլն։ Իր այդ 500 րուբլուց 15 րուբլին տալով գանձարանին, նա անպատճառ կտրում, կրճատում է իր առանց այն էլ կրճատուած կարիքները։ Այլ է երկրորդ քաղաքացու դրութիւնը։ Նրա տարեկան եկամուտը 5000 րուբլի է։ Եթէ նոյնիսկ ենթադրենք, թէ նրա մօտ և՛ բնակարանը և՛ սնունդը և՛ հագուստը հ ի ն գ ա ն գ ա մ աւելի լաւ են, քան առաջինի մօտ,—այնուամենայնիւ առաջնակարգ անհրաժեշտ առարկաների վրայ նա կը ծախսէ միայն տարեկան 2500 րուբլի։ Ուրեմն, նրա մօտ դեռ կը մնայ 2500 ր., որից և մի մասը կը վճարէ գանձարանին։ Եւ ի՛նչ մասը... Ընդամենը 150 րուբլի... Մնում է ուրեմն նրա գրպանում, ուրիշ կենսական յարմարութիւնների ու հաճոյքների համար՝ ամբողջ 2350 րուբլի։ Պարզ չէ՞ արդեօք, որ նրա դրութիւնը հարկերի դիմաց անհամեմատ աւելի լաւ է այն մարդու վիճակից, որի տարեկան եկամուտն է 500 րուբլի։

Պարզ եկամտային հարկի կարծեցեալ „արդարութիւնը“ աւելի ևս յստակօրէն երևան կը գայ, եթէ մենք ի նկատի առնենք նաև դրութիւնը այն հարուստի, որի տարեկան եկամուտն է 50,000 րուբլի։ Ենթադրենք, թէ այդ վերջինը ծախսում է մարդկային ամենահրաժեշտ կարիքների համար տասն անգամ աւելի քան այն մարդը, որ տարեկան ունի միայն 500 րուբլի։ Ենթադրենք թէ այդպէս է հէնց նրա բնութիւնը, թէ նա իր բնակարանի, ապրուստի, զգեստի և այլ պիտոյքների վրայ պիտի ծախսէ ոչ պակաս, քան 5000 րուբլի, տարեկան։ Թող այդպէս լինի։ Բայց այնուամենայնիւ, դուրս է գալիս, որ նրա մօտ մնում է կեանքի ամեն տեսակ հաճոյքների և քմահաճոյքների համար դեռ ամբողջ 45,000 րուբլի։ Եւ ահա այդ—ամբողջ 45,000 րուբլուց է, որ նա պիտի վճարէ գանձարանին ընդամենը 1,500 իր տարեկան տուրքը։

Ահաւասիկ, ուրեմն, համառօտ հաշիւը.

Տարեկան 500 ր. վաստակողը տալիս է գանձարանին 15 ր., զրկելով իրեն որևէ անպայման

անհրաժեշտ բանից։ 5000 ր. վաստակողը հագնվում է, ուտում, ապրում հինգ անգամ լաւ առաջինից և տալիս է գանձարանին 150 ր., այսինքն տասներորդ մասը այն 2500-ի, որոնք մնում են նրա գրպանում՝ երկրորդական ու երրորդական կարիքների համար։ Վերջապէս տարեկան 50,000 ր. ստացողը հագնվում է, ուտում, խմում տասն անգամ լաւ առաջինից և տալիս է գանձարանին միայն երեսներորդ բաժինը (45,000 : 1500=30) այն հսկայական գումարի, որ մնում է նրա մօտ՝ այլ և այլ հաճոյքների ու կապրիզների համար։

Ճիշտ չէ՞ արդեօք, որ պարզ եկամտային հարկը արմատից անարդար է։ Նա խլում է չունևորից մի մասը այն խղճուկ միջոցներից, որոնցով նա պիտի պահպանէ իր գոյութիւնը։ Նա դնում է միջին կարողութեան տէր մարդուն աւելի աննպաստ պայմաններում, քան հարստին։ Նա, վերջապէս, առնում է հարստի արքայական եկամտի համեմատաբար չնչին մասը։ Ո՞րտեղ է արդարութիւնը...

*

Արդարութիւնը մենք գտնում ենք եկամուտային հարկի այն ձևի մէջ, որ յայտնի է ֆինանսական գիտութեան մէջ պրօգրէսսիվ տուրք անունով։

Տեսնենք ինչ տեսակ հարկ է դա։ Նախ պէտք է ասել, որ աղգաբնակութեան մեծ մասը, առաւելապէս նեղ ապահով մասը, պէտք է միանգամայն ազատուի եկամտային տուրքից։ Ի՞նչ կարելի է վերցնել յիրաւի, այն մարդկանցից, որոնց տարեկան հասոյթը չի անցնում 250—300 ռուբլուց։ Չէ՞ որ այդտեղ իւրաքանչիւր կոպէկը հաշուած է, նշանակուած այս կամ այն անյետաձգելի կարիքի համար։ Ահա թէ ինչու հարկային բեռը պէտք է ծանրանայ միմիայն նրանց վրայ, որոնց տարեկան եկամուտը պակաս չէ 400 ռուբլուց։ Եւ այդտեղ էլ հարկը պիտի լինի չնչին, ասենք 0,5 տոկոս, այսինքն 50 կոպէկ տարեկան եկամտի ամեն մի 100 ռուբլուց։

Յետոյ—հարկային տոկոսը հետզհետէ աճում է, եկամտի աճման հետ։ Այսինքն. իւրաքանչիւրը, որ ստանում է դիցուք տարեկան 600 ռուբլի, պիտի վճարէ գանձարանին արդէն ոչ 0,5 տոկոս, այլ 1 տոկոս իր եկամտից, իսկ նա, որ ստանում է տարեկան 800 ռուբլի, պիտի տայ գանձարանին աւելի ևս մեծ տոկոս, օրինակ 1 ր. 50 կ. տարեկան եկամտի 100-ական ռուբլուց։ Եւ այլն, համաձայն դիցուք, հետևեալ ցանկին՝

Տարեկան եկամուտ	Հարկային % նրանից	Ամբողջ հարկ
Մինչև 300 ռուբլի	Ոչինչ.	Ոչինչ.
„ 400 „	0,5%	2 ռուբ.
„ 600 „	1%	6 „
„ 800 „	1,5%	12 „
„ 1000 „	2%	20 „
„ 2000 „	4%	80 „
„ 3000 „	5%	150 „
„ 4000 „	7%	280 „
„ 5000 „	10%	500 „
„ 10000 „	15%	1500 „
„ 20000 „	20%	4000 „
„ 50000 „	30%	15000 „

Եւ այլն։

Ահա այդ է պրօգրէսսիվ—եկամտային հարկը։ Տարբերութիւնը նրա և միւսի (պարզ եկամտայինի) միջև ինչպէս տեսնում էք, ահագին է։ Պարզ-եկամտային հարկի դէպքում գանձարան մտնող տոկոսը նոյնն է թէ քիչ-ապահով մարդկանց և թէ հարուստների համար։ Իսկ պրօգրէսսիվ հարկի ժամանակ այդ տոկոսը արագարագ բարձրանում է եկամուտների աճման հետ միասին։ Առաջին դէպքում հարկային ծանրութիւնը ընկնում է չունևորների վրայ։ Իսկ վերջին դէպքում (պրօգրէսսիվ տուրքի ժամանակ) այդ ծանրութիւնը ընկնում է հարուստների վրայ մի բան, որ իհարկէ, միանգամայն արդար է։

Այդպէս ուրեմն, երբ մեր երկրում կը մտցրուի պրօգրէսսիվ-եկամտային տուրքը, այն ժամանակ պետական գանձարանը լցնողները կը լինեն խոշոր հողատէրերը, գործարանատէրերը, խոշոր առևտրականները, բանկիրները, չինովնիկները, որոնք ստանում են ահագին ռոճիկ, փաստաբաններն ու բժիշկները, որոնք վաստակում են տարեկան մի քանի տասնեակ հազարներ, ապա և ամեն տեսակ անգործներ, ձրիակերներ, որոնք բախտի բերմամբ օժտուել են մեծ կարողութիւններով։ Այդ վերջինների թուումն են բոլոր նրանք, որոնք ապրում են այն գոյքերի կամ դրամագլխի եկամտով, որ ստացել են իբրև ժառանգութիւն։

Իդէպ։ Իրաւունք ունի՞ արդեօք մի մարդ, որ երբէք մատը մատին չի խփել, մի քանի ռուբլի վաստակելու համար,—իրաւունք ունի՞ մի այդպիսի մարդ պերճ ու շռայլ կեանք վարելու այն փողերով, որոնք ընկել են նրա ձեռքը միայն այն պատճառով՝ որ իր պապը, հայրը կամ առասպելական „հօրեղբայրը Ամերիկայում“ ամբարել են այդ փողերը ամեն տեսակ միջոցներով... Հարկ չը կայ ասել, որ բարոյական իրաւունքի մասին այստեղ խօսք անգամ չի կարող լինել։ Ինչ վերաբերում է ձևական, իրաւական իրաւունքի մասին, ես արդէն մի անգամ ցոյց եմ տուել այդ տեսակ իրաւունքների ճշմարիտ արժէքը։ Նրանք բոլորը միայն սրբագործում են իրերու փաստական վիճակը։ Ապա ուրեմն, այնտեղ, ուր հարկաւոր է արմատական վերաշինման ենթարկել „իրերի ամբողջ փաստական վիճակը“, այնտեղ, ինքն ըստ ինքեան հասկանալի է, պէտք է խորտակուեն և այն „իրաւունքները“, որոնք համապատասխանում են իրերի մի այդպիսի վիճակի։ Այդ տեսակ իրաւունքների“ թուին է պատկանում և գոյք ժառանգելու իրաւունքը։ Ոչնչացնելու այն ամբողջապէս, բուրժուա-կապիտալիստական սիստեմի շրջանակներում՝ աներևակայելի է։ Պէտք է, ուրեմն, գէթ սահմանափակել այդ „իրաւունքը“, որքան հնարաւոր է։ Այդ սահմանափակումը կարող է կատարուել հետևեալ կերպով.

Օրէնքը խստօրէն սահմանում է այն չափը կամ այն գումարը, որից աւելի ոչ ոք իրաւունք չունի թողնել կամ ստանալ ժառանգութիւն։ Ինչ որ աւելորդ կը մնայ այդ օրէնքով սահմանուած գումարից դուրս՝ կը մտնի գանձարանը, ծախսուելու համար ընդհանուր պետական կարիքների վրայ։

Ապա նոյն օրէնքը դնում է իւրաքանչիւր ժառանգութեան վրայ հարկ, և անպայման պրօգրէսսիվ հարկ։ Այդպիսով պետական գանձարանը կունենայ հարուստների ժառանգութիւններից կրկնակի եկամուտ—նախ այդ ժառանգութիւնների մի մասը ուղղակի կ՝անցնի գանձա-

րանն, իսկ միւս, „օրինականացած“ մասը կը բերէ համապատասխան տուրք։

*

Սակայն, բանը ահա թէ ինչումն է։ Հարց է առաջ գալիս՝ արդեօք պետութեան համար այն միջոցները, որ նա պիտի ստանայ պրօգրէսսիվ հարկի ձեւով եկամուտներից ու ժառանգութիւններից կը կարողանա՞յ ծախսել այդ միջոցներով իր ծախքերը։

Պէտք է ենթադրել, որ կը կարողանայ, եթէ, իհարկէ, կը ծախսէ ազնիւ ու խելացի կերպով և ոչ այնպէս, ինչպէս անում են մեր օրերում։ Յետոյ մի մոռացէք որ ամեն պետութիւն կարող է ունենալ եկամտի մի ուրիշ յուսալի և միևնոյն ժամանակ բոլորովին արդար աղբիւր, դա *պերճանքի հարկն* է, այն հարկը, որ դրւում է պերճանքի առարկաների վրայ։ Այդ վերջինը ևս յիշատակւած է մեր կուսակցութեան նւազագոյն ծրագրի մէջ։

Առաջին հարցը, որ ծագում է այդ տեսակ հարկերի քննութեան միջոցին, սովորաբար հետևեալն է. ի՞նչ է պերճանքի առարկան. ի՞նչպէս զանազանել այն՝ *առաջին անհրաժեշտութեան* առարկաներից և մանաւանդ այն առարկաներից, որոնք հայթայթում են մարդկանց որոշ կարգի *յարմարութիւններ*։

Տարբերութիւնը պերճանքի և առաջին անհրաժեշտութեան առարկաների միջև այնքան ակներև է, որ կարիք չը կայ երկար ծանրանալու նրա վրայ։ Առաջին անհրաժեշտութեան առարկաներ նրանք են, որոնք հաւասարապէս պէտք են և՛ հարստին, և միջին կարողութեան տէր մարդուն և՛ աշխատաւոր-չքաւորին։ Դրանք *այն ապրանքներն են, որոնք սպառւում են, աշխատաւոր ժողովրդի լայն մասսաների մէջ*։

Փոքր ինչ դժւար է տարբերութիւն սահմանել պերճանքի առարկաների և այն առարկաների միջև, որոնք յայտնի յարմարութիւններ կամ յայտնի հաճոյք են մատակարարում մարդկանց։ Սակայն այդ էլ վերջ իվերջոյ հնարաւոր է։

Մենք, իհարկէ կողմնակից չենք ոչ միայն ասկետիկ, ճգնաւորական իդէալների, այլ նոյնիսկ շատ թէ քիչ ռիգորիստական, խստաբարոյ աշխարհահայեացքի։ Մենք ձգտում ենք այնպիսի կարգերի, ուր կեանքի ամենատեսակ յարմարութիւններն ու խելացի հաճոյքները կը դառնան սեփականութիւն բոլոր մարդկանց համար։ Մենք ուզում ենք, որ անհատի կեանքը աւելի և աւելի հարստանայ, լցւի բազմօրինակ, գունաւոր ու պայծառ բովանդակութեամբ։ Հետևապէս, մենք ոչ մի կերպ չենք կարող պաշտպանել այնպիսի հարկեր, որոնց շնորհիւ պիտի աւելանայ այն ապրանքների արժէքը, որոնք տալիս են մարդկանց անհրաժեշտ յարմարութիւն կամ խելացի հաճոյք։

Կայ յարմարութիւն և յարմարութիւն, և ամեն մի հաճոյք արժանի չէ խրախուսանքի։

Մէկը, օրինակ, գոհանում է առողջ ու կուշտ ճաշով, միւսը պահանջում է անպայման նուրբ ու համեղ կերակուրներ ու ամենաթանկ գինիներ։ Մէկը հագնւում է վայելուչ կերպով, սիրուն ու մաքուր, միւսը անպատճառ թաղւում է մետաքսի, մանմուրի ու թանկագին քարերի մէջ։ Մէկի բնակարանը—պարզ, յարմար, ճաշակաւոր, միւսինը—շքեղ փայլուն մի պալատ։ Տարբերութիւնը, ինչպէս տեսնում էք, ահագին է։ Մէկը ունի ինչ որ հարկաւոր է, իսկ միւսի մօտ կան չափազանց շատ աւելորդ բաներ, որ և անւանում ենք պերճանք, շռայլութիւն։ Առաջինը հոգում է միայն յարմարութիւնների մասին, իսկ երկրորդին այդ յարմարութիւնները հերիք չեն, նա ուզում է դեռ փայլել ուրիշների առջև իր հարստութեամբ, ուզում է ցոյց տալ, որ իր ունեցածը *ամենաթանկագին, ամենահազւագիւտ բաներ են*,—այն ամենը, ինչ որ չը կայ ուրիշների մօտ. նա ուզում է գոհացում տալ մարդկային ամենադատարկ, ամենասին զգացումներից մէկին—*սնափառութեան*։ Եւ շա՜տ լաւ։ Թող մխիթարւի սնափառ հոգին, բայց *թող նա դրա համար տուրք վճարի հասարակութեանը*։ Նա թանկ բաներ է փնտրում. կառավարութիւնը սիրով կը մատակարարէ նրան այդ հաճոյքը, բայց նա հարկ կը դնէ շռայլութեան, պերճանքի բոլոր ապրանքների վրայ։ Կառավարութիւնը կասէ նրան. „Դու ուզում ես պտոյտներ անել անպատճառ քո սեփական կառքով և ամենաընտիր ձիաները լծել, տա՛ր հարկ և՛ կառքի և ձիաների համար։ Քեզ պէտք են մարգարիտներ, ադամանդներ, ամեն տեսակ պսպղուն քարեր—ես այդ բոլորի վրայ հարկ կը դնեմ, քեզ համար էլ հէնց որքան աւելի թանկ է ապրանքը, այնքան աւելի արժէքաւոր է։ Եւ թանգ գնելով, դու կարող ես միայն պարծենալ ուրիշների առաջ, կարող ես բաւարարութիւն տալ քո սնափառութեան“...

Աւելացնեմ հետևեալը։ Պերճանքի առարկաների վրայ դրւող հարկը կարող էր լինել ուղղակի և անուղղակի և կամ երկուսը միասին։ Վստահ կարելի է լինել, որ այդ հարկերը բաւական խոշոր հասոյթ կը բերեն պետական գանձարանին, և որ գլխաւորն է, կ՚օգնեն աղքատ դասակարգերին՝ ազատւելու իրենց ծանր բեռից, այն տուրքերից, որ նրանք վճարում են առաջնակարգ անհրաժեշտութիւն ունեցող ապրանքները ձեռք բերելու համար...

*

Մեր նւազագոյն ծրագիրը պահանջում է, ի միջի այլոց, վերացնել մաքսը արտասահմանից ներմուծւող ապրանքներից։ Այդ պահանջը կարելի է առաջադրել միայն մի քանի սահմանափակումներով ու պայմաններով, որոնց մասին կասեմ երկու խօսք։ Մէկը այդ սահմանափակումներից արդէն յայտնի է ձեզ. *մեր ծրագիրը չէ վերացնում մաքսը ներմուծւող պերճանքի ապրանքներից*։ Միւս սահմանափակումը բղխում է հետևեալ դատողութիւնից։

Ենթադրենք, որ նոր օրէնքը վերացնում է մաքսը արտասահմանից եկող այն ապրանքներից, որոնք առաջնակարգ անհրաժեշտութեան բնոյթ ունին. օրինակ՝ երկաթէ կամ չուգունի շինւածքներ, բրդի կամ բամբակի հիւսւածքներ և այլն։ Օրէնքը „կարծես“ լաւ է։ Այո „կարծես“, որովհետև նա լաւ է ոչ միշտ և ոչ ամեն տեսակ պայմաններում։ Արդարև։ Մինչև վերոյիշեալ մաքսը ոչնչացնելը, մենք օգտւում էինք մեր սեփական երկրի համապատասխան ապրանքներից, քանի որ արտասահմանեանները մաքսի պատճառով մատչելի էին միայն քչերին։ Բայց ահա մաքսը վերացաւ։ Բրդի, բամբակի, թղթի, երկաթի և այլ ապրանքները յորձանք տւին արտասահ-

մանից և լցրին մեր „Հայրենական“ շուկան։ Մեր գործարանատէրերը զգում են իսկոյն, որ իրենց բանը բուրդ է։ Սեփական ապրանքը նրանք չեն կարող վաճառ հանել նոյն գնով, որով ծախւում է եկւոր, արտասահմանեան ապրանքը։ Եւ գնողներ էլ շատ քիչ կը գտնւին։ Մեծամասնութիւնը նախապատւութիւն է տալիս արտասահմանին։ Ի՞նչ անել։ Մնում է մէկ բան, փակել զաւօդների ու գործարանների մի մասը։ Եւ փակում են։ Իսկ հապարաւոր բանւորներ, շնորհիւ նրան, մնում են առանց վաստակի, նեռւում են փողոց։

Այդ դեռ քիչ է։ Նոր օրէնքը, որ վերացնում է մաքսը արտասահմանեան ապրանքներից կարող է վատթարացնել նոյնիսկ այն բանւորների վիճակը, որոնք դեռ մնում են գործարաններում։ Հասկանալի է ինչու։ Տեսնելով, որ առաջնակարգ կարևորութիւն ունեցող շատ ապրանքների գինը ընկել է, որ կեանքը էժանացել է (շնորհիւ մաքսի վերացւելուն ներմուծւող ապրանքներից), մեր գործարանները բնականաբար կը պակսեցնեն իրենց բանւորների օրավարձը։ Դուրս է գալիս, ուրեմն, որ արտասահմանեան ապրանքներից մաքսի վերացումը (մեր խօսքը, իհարկէ պերճանքի ապրանքների մասին չէ) ձեռնտու է աշխատաւոր մասսաներին ոչ բոլոր հանգամանքներում։

Երևակայեցէք սակայն պայմանների մի այլ զուգադրումն, որ և նախատեսուած է մեր ծրագրի մէջ։ Երևակայեցէք, որ արտասահմանեան ապրանքներից մաքսը վերացնելու հետ միաժամանակ հրատարակւում են երկու ուրիշ օրէնք։ Նրանցից մէկը ձայնում է՝ բոլոր հողերը դրւում են մշակողների տրամադրութեան տակ (հողի համայնացումն)։ Իսկ միւս օրէնքի համեմատ՝ ոչ մի գործարանատէր իրաւունք չունի վճարելու բանւորներին օրէնքով սահմանւած օրավարձից պակաս (նւազագոյն օրավարձի օրէնք)։ Այդտեղ արդէն գործը բոլորովին այլ կերպարանք է առնում։ Առանց աշխատանքի մնացած բանւորները վերադառնում են հողի գիրկը, իսկ գործարաններում մնացածները չեն տուժի մաքսի վերացումից (արտասահմ. ապրանքներից), քանի որ գործարանատէրերը չեն համարձակւի իջեցնել նրանց օրավարձը։

Ահա թէ ինչու, իմիջի այլոց, մենք, դաշնակցականներս, ծանրանում ենք ոչ թէ մէկ որևէ բարենորոգութեան, այլ բազմազան բարենորոգութիւնների մի ամբողջ շարքի վրայ, որոնք միմեանց պայմանաւորում ու լրացնում են։ Չէ՞ որ պետական կեանքը նման է մի բարդ հսկայական մեքենայի, որի մէջ մի անիւ պինդ բռնած է միւսին, մի լծակ շարժման մէջ է դնում մի ուրիշին։ Չի կարելի հին ժանգոտած մեքենայի վրայ ամրացնել մի լաւ նորակառոյց մեքենայի անիւը։ Պէտք է ուղղակի խորտակել նրան և գործի դնել մի նոր մեքենայ, որի մէջ ամեն բան նոր է—անիւները, լծակները և ամեն բան կանոնաւոր ու ներդաշնակ։

Մեր կեանքը պէտք է շուռ տալ միանգամից և մի քանի բևեռներից...

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՀԱԿԱՍԱԿԱՆ ԹՈՒՉՔՆԵՐԸ ՄԱՐՔՍԻԶՄԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՄԷՋ

Հեգելի թէօրիայով սպառազինւած, դիալեկտիկայի „յաւիտենական ու անսասան“ օրէնքներն իւրացրած՝ Կարլ Մարքսը 40-ական թուականներին (անցեալ դարի) յայտնւեց Պարիզում,—կլասիկական ու աշխարհագրագրդ յեղափոխութիւնների կենտրոնում։ Այդտեղ էր որ հաստատւեց վերջնականապէս նրա քաղաքական կերպարանքը, Պարիզն էր, իր մշտաբորբոք, եռուն, ալեկոծ մթնոլորտով, որ հաղորդեց Մարքսի վարդապետութեանը այն կատաղի յեղափոխական դրոշմը և այն սանձարձակ ու լաւատես խանդավառութիւնը, որ մենք տեսնում ենք նրա սկզբնական գրւածքների մէջ։ Նա խօսում էր շարունակ կռւի, ապստամբութեան, բռնի, արիւնոտ յեղաշրջումների մասին։ Նա ուզում էր համադրել իր անձնաւորութեան մէջ երկու ցեղերի, գերմանականի ու ֆրանսիականի, իդէօլոգիան, խառնւածքները, ձգտումները, սակայն այդ սինթեզը, երկու հակամարտ տարրերի այդ համադրութիւնը եղաւ շինծու, արհեստական, նա չէը դիմացաւ ժամանակի պահանջների յորձանքի առջև, տեսօնական հեգելեանիզմը անկարող էր հաշտւել գաղղիական դանտոնիզմի հետ...

Պարիզեան մթնոլորտի թոյլիչ ազդեցութեան տակ՝ Մարքսը ինքը դարձաւ գործնականապէս յեղափոխական, նեռւեց „ստորերկրեայ“ ուշխատանքի մէջ, անդամ դրւեց գաղտնի դաւադրական ընկերութիւնների։ Միևնոյն ժամանակ յեղափոխութեան գաղափարը արծարծեց նա իր գրւածքներում, սկսած „Deutsch-Franz. Jahrbücher“-ից, որ հրատարակւում էր 1844-ին։ Պրուդօնի դէմ գրած իր տեսական աշխատութեան մէջ իսկ („Փիլիսոփայութեան խեղճութիւնը“)՝ նա վառ խօսքերով ջատագովում է կատաստրոֆները, արիւնահեղ ու արդասաւոր բաղխումները։ Իսկ հռչակաւոր „Մանիֆեստի“ մէջ, 1848-ին, նա գրում էր Էնգելսի հետ. „կոմմունիստները (համայնականները կամ սոցիալիստները) բացարձակապէս յայտարարում են, որ իրենց նպատակները իրագործելի են միայն տիրող կարգերի բռնի տապալումով“։ Այդտեղ լսւում է նաև երիտասարդ թէօրիկոսների մոլեգնոտ սպառնալիքը. „Թող իշխող դասակարգերը դողան կոմմունիստական յեղափոխութեան առջև“... Նոյն 1848 թւին Մարքսը քարոզում է նոյնիսկ տերրոր... „Neue Rheinische Zeitung“-ի մէջ նա գրում է. „կայ միայն մէկ միջոց կրճատելու, կենտրոնացնելու համար հին հասարակութեան սպանիչ տանջանքները և նորաձիւի արիւնոտ չարչարանքները—դա յեղափոխական տերրորիզմն է“...

Հսկայական ազդեցութիւն է անում Մարքսի խանդավառ երևակայութեան վրայ մանաւանդ փետրուարեան յեղափոխութիւնը (1848 թ.), որ պայթեց Պարիզում և անմիջապէս իր հզոր արձագանքներն ունեցաւ Բերլինում՝ Վիեննայում, Իտալիայի որոշ կէտերում,—գրեթէ ամբողջ եւրոպական ցամաքի վրայ։ Մեծ մայրաքաղաքները ծխում են արեան գոլորշիների մէջ, թագաւորները ահաբեկւած՝ շտապում են զիջումներ անել, ժողովուրդը յաղթութիւն է գոչում... Մարքսին թւում է, թէ դա արդէն „սկիզբն է վերջաւորութեան“, նրան թւում է, հասել է դերագոյն ու հանդիսաւոր ժամը, երբ իր մեծ ուսուցչի՝ Հեգելի արտայայտութեամբ՝ աշխարհը պիտի դրւի գլխի վայր, կամ աւելի ճիշտ՝ նա պիտի դրւի, վերջապէս, իր ոտքերի վրայ...

Մարքսեան օպտիմիզմը հանում է այն սատիճանին, որ նա մարգարէանում է, թէ բուրժուազական-քաղաքական այդ յեղափոխութեանը անմիջապէս, նոյնիսկ Գերմանիայում, պիտի յաջորդէ բուն սոցիալական կամ սոցիալիստական յեղափոխութիւնը և որ այդ վերջինը պիտի գլուխ բերէ Գերմանիայի պրոլետարիատը...

Գերմանիայի պրոլետարիատը, այդ խղճուկ, ցիր ու ցան, փոքրաթիւ ոյժը, որ դեռ չունէր դասակարգային ինքնագիտակցութիւն, որ դեռ զուրկ էր ամեն կրթութիւնից ու պատրաստութիւնից—պէտք է կատարէր անցեալ դարի

50-ական թուականներում սօցիալական յեղափոխութիւն և պիտի իրագործէր սօցիալիզմը... ահա թէ որքան մեծ տեղ էր բռնում „իլլիւզիան", երիտասարդական միամիտ պատրանքը, Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի յայտարարած սօցիալիստական քաղաքականութեան մէջ։ Բուրժուազական տնտեսութիւնը դեռ կիսահասուն վիճակում, արդիւնագործութիւնը, ինդուստրիան դեռ նոր միայն մուտք կոխած— ֆէօդալ-բռնապետական Գերմանիան պիտի անէր արդէն հսկայական թռիչքը „ստրկութեան աշխարհից՝ դէպի ազատութեան թագաւորութիւնը"... Ահա մի մարգարէութիւն, որ չի դիմանում ոչ մի տրամաբանութեան, որ հակասում է նոյնիսկ մարքսիզմին, նոյնիսկ „դիալեկտիկայի" օրէնքներին, քանի որ այդ վերջինի թելադրութեամբ՝ նման „թըռիչքները", „կատաստրօֆները" կամ յեղափոխութիւնները կատարւում են միայն այն ժամանակ, երբ ապագայ հասարակութեան (հեգելեան անթիզի) տարրերը արդէն պատրաստ հասունացած են ներկայ հասարակութեան (հեգելեան թեզի) արգանդի մէջ, երբ արդիւնաբերութիւնը հասած է պատշաճ զարգացման ու կենտրոնացման, երբ դասակարգային ներհակութիւնները սրւած են այն աստիճան, որ այլես անհնարին է դասակարգերի նորմալ կենակցութիւնը եւայլն եւայլն։

Պատրանքը մնաց՝ մարգարէական միամիտ օպտիմիզմը յարատևեց նոյնիսկ փետրուարեան յեղափոխութիւնից ու „Յունիսեան օրերից" յետոյ, երբ Պարիզը դարձաւ պրօլետարական հեկատոմբների մի դաշտ, երբ պարտւած, ու յօշոտւած աշխատաւոր ժողովրդի ուսերի վրայ բարձրացաւ անարգ ռէակցիայի տիրապետութիւնը, որ կենտրոնացաւ քիչ յետոյ թագաւոր—ուզուրպատորի անձնաւորութեան մէջ։

Մարքսիզմի հայրերը շարունակեցին յայտարարել, որ կապիտալիզմի օրերը հաշւած են և սօցիալիզմի արշալոյսը մօտ է։ Թէ Նիւ-Եօրկի „Tribune"-ի մէջ զետեղւած յօդւածներում և թէ Արևելեան հարցի մասին գրածներում (1853—56 թ.)՝ նրանք գուշակում են համաեւրոպական յեղափոխութեան մօտալուտ ու ազատարար բռնկումը...

Զարմանալի ուշագրաւ է երկու նշանաւոր սօցիալիստների դիրքը նաև ազգային խնդրի մէջ։ Այդ դիրքը բղխում է այն ժամանակւայ նրանց ընդհանուր աշխարհայեացքից ու քաղաքականութիւնից։ Երբ մարդիկ համոզւած են, որ շուտով, դուցէ մի քանի տարուց յետոյ կապիտալիստական ամբողջ սիստեմը պիտի չքանայ և պիտի հաստատւի նոր սօցիալիստական աշխարհը համուր ազատութեան ու հաւասարութեան հիմունքներով,—բնական է, որ ազգային հարցը կորցնում է նրանց աչքում իր կարևորութիւնը։ Նրանց ըմբռնումով, ազգերը մօտ ապագայում պիտի ձուլւէին համամարդկային մէկ գերդաստանում և ընդհանուր հաւասարութեան մէջ պիտի չքանային բոլոր ազգայնական խտրութիւններն ու հակառակութիւնները։ Նոյնիսկ ներկայումս, ազգային խնդիրը գոյութիւն չունէր Մարքսիզմի համար, նա բացասական դիրք էր բռնում դէպի այդ մեծ ու աղաղակող պրօբլեմը, նրա համար գոյութիւն ունէր միմիայն դասակարգային կամ սօցիալական հարցը և նա հռչակում էր 1848-ի Մանիֆեստի մէջ իր զուտ կօսմօպօլիտական, համաշխարհայնական դաւանանքը յայտնի դարձւածով. „աշխատաւորները չունին հայրենիք"... Ուր շահ, այնտեղ և հայրենիք—այս չոր բանաձևին էր վերածւում ազգային հարցը և հայրենասիրութիւնը։

Դարձեալ որքա՜ն միամիտ անուրջներ... Դա, այսպէս ասած, իրականութեան բռնաբարումն էր և մետաֆիզիքական (բնազանցական) մի բանդագուշանք... այն մարդկանց կողմից, որոնք հրապարակ էին եկել՝ պայքարելու մետաֆիզիկայի դէմ և կանգնելու զուտ իրականութեան հողի վրայ։ Պրօլետարիատի համար, նոյնիսկ փետրուարեան յեղափոխութիւնների մէջ Պարիզում, Բեռլինում, Վիեննայում կռւող ու զոհւող աշխատաւոր զանգւածների համար բնաւ անտարբեր չէր ազգային հարցը, հայրենիքի հարցը։ Պարիզեան պրօլետարեատը, մանաւորապէս միշտ հպարտ է եղել և է ցայսօր իր ազգային մեծ ու թովիչ աւանդութիւններով, յիշողութիւններով։ Ամբողջ համաշխարհային պրօլետարիատը մինչև օրս մնում է խորապէս ու անկեղծօրէն հայրենասէր, նախանձախնդիր իր ազգային քաղաքակրթութեան, իր հայրենիքի անկախութեան, իր ուրոյն, հարազատ օճախի անբռնաբարելիութեան—և տենչում է իրագործել իր սօցիալիստական իդէալները իր ցեղագրական սահմանների մէջ։ Բացի քաղաքական ու տնտեսական նկատումներից, բացի ստամոքսի դձուձ մտահոգութիւններից՝ կան այդտեղ հոգեբանական կարգի պատճառներ, որոնք միանգամայն անտես էր առնում այն ժամանակւայ մարքսիզմը, անտես է առնում մասամբ և այժմ։

Ժամանակը առաջ գնալով, միշտ աւելի և աւելի մերկացաւ Մարքս-Էնգելսեան „ազգային քաղաքականութեան" ըմբռնումի հիմնական սխալը։

Նրանք տեսան, ինչպէս պատմութիւնը յաջորդաբար ու կարծես ճակատագրական մի անհրաժեշտութեամբ դուրս է կոչում անյայտութիւնից ու մոռացութիւնից՝ նոր-նոր ազգութիւններ, որոնք արիւնահեղ ապստամբութիւնների ու անբաւ զոհողութիւնների միջոցով դիմում են դէպի ուրոյն, անկախ գոյութիւն. Նրանք ականատես եղան Իտալիայի, Ունգարիայի ազատագրութեան, նրանք տեսան Տաճկաստանի անդամահատումը, մանր ու ստրուկ ազգութիւնների օրհասական կռիւն ու ազատութիւնը... Սօցիալական-դասակարգային խնդիրները յետ էին մղւել երկա՜ր ժամանակ, և ամբողջ տասնեակ տարիների ընթացքում ազգային խնդիրն էր, որ արիւնոտ կռիւների շարքերով լըցնում էր եւրոպական պատմութիւնը։ Մարքսի և Էնգելսի հայեացքների մէջ կատարւեց յեղաշրջում, նրանք հետզհետէ զգացին իրենց մոլորութիւնը և ամբողջ մարքսիստական դպրոցը ժամանակի ընթացքում, իրականութեան դասերից հրահանգւած՝ թողեց մետաֆիզիքական ազգային հարցի մէջ և դարձան որոշ բացատրութիւններով, աւելի ռէալիստ, աւելի իրապաշտ։ Եւ այսօր իւրաքանչիւր խելահաս մարքսիստ, 60 տարւայ էւօլիւցիայից յետոյ, ստիպւած է խոստովանել, որ ազգային հարցը սերտ կերպով կապւած է դասակարգային հարցի հետ, որ աշխատաւոր ընդհանրութեան համար իր ազգային ազատութիւնը „նոյնքան կարևոր է, որքան ընդհանուր ընտրողական իրաւունքը", որ այդ տեսակ ազատութեան մէջ միայն նա կարող է շնչել անարգել, գործել անարգել և առաջ մղել անկաշկանդ կերպով իր դասակարգային կռիւը մինչև մեծ իտէալի յաղթանակը, որ վերջապէս, նոյնիսկ ապագայում, սօցիալիստական համաշխարհային ընտանիքի մէջ, ազգերը հաւանօրէն պահպանելու են—ի շահ մարդկութեան հարստութեան իսկ—իրենց որոշ ինքնուրոյնութիւնն ու այլազանութիւնը...

***

Կատաղի և լուատես յեղափոխական մնաց Կարլ Մարքս մինչև 70-ական թւականները։ Ղրիմի պատերազմի ընթացքում ևս նա շարունակեց մեծ պայթիւններ ու կատաստրօֆներ գուշակել։ Նրա ղեկավարութեան տակ գտնւող՝ Ինտերնացիօնալը մասնակցեց Պարիզի հռչակաւոր Կօմմունային, որը ֆրանս-պրուսական պատերազմի միջոցին ապստամբեց հայրենի կառավարութեան դէմ և Պարիզի տէրը դարձաւ ամբողջ երկու ամիս։ Կօմմունայի աղէտալի պարտութիւնը, սակայն, սառը ջուր մաղեց „կատաստրօֆականների" լուատես խանդավառութեան վրայ։ Նրանց թըւում էր դարձեալ թէ հասել է „պրօլետարիատի դիկտատուրայի" օրը, թէ բանւոր դասակարգը բուրժուազական սիստեմի աւերակների վրայ պիտի հիմնարկէ շուտով տիեզերական կարմիր հանրապետութիւնը... Իրականութիւնը եկաւ, սակայն, մի դառն ու ահեղ դաս տալու նրանց, նա եկաւ հաստատելու, որ ոչ օբեկտիվ պայմաններն են հասունացած այդ ցանկալի յեղաշրջման համար, ոչ էլ ինքը պրօլետարիատն է բաւականաչափ հասունացած, կազմ ու պատրաստ, որ կարողանայ տևողաբար պահել իր ձեռքում ժողովուրդների քաղաքական ղեկը և վարել նրանց ճակատագիրը։ Այդ տեսակէտից պարիզեան Կօմմունան մի ահագին ու նշանակալի իրողութիւն էր։ Յեղափոխական խանդավառութիւնը իջաւ, Մարքսի մարգարէական ձայնն էլ կարծես լռեց։ Նա, որ իր բոլոր գրւածքներում անխուսա-

փելի կրիզներ ու կատաստրոֆներ էր նախատեսնում, իբրև միակ միջոց սոցիալական վերանորոգութեան, նա որ իր „Կապիտալի“ առաջին հատորում, դասակարգային ատելութեամբ լցուած, շարունակ խօսում էր կապիտալիզմի բռնի տապալման մասին,—այդ անխուսով ու մոլեգին ըմբոստը այնուհետև մեղմեց իր թափը, զգաստացաւ, չափաւորուեց, թուլացաւ նրա հաւատը դէպի կրիզիսների ու յեղափոխութեան հրաշագործ ոյժը, և նա սկսեց մերթ ընդ մերթ նոյնիսկ խաղաղասիրական յայտարարութիւններ անել. նա պնդում է, օրինակ, որ Անգլիայում հնարաւոր կը լինի խաղաղ ճանապարհով իրագործել սոցիալիստական կարգերը, նա մինչև իսկ ասում է մի անգամ, թէ Անգլիայում լաւ կը լիներ՝ դնել խոշոր կալուածատէրերի հողերը և ոչ թէ գրաւել բռնութեամբ*...

Նոյն էւոլիւցիան կրում է Մարքսիզմի երկրորդ հայրը —Ինգելս։ Նա ևս, դեռ փետրուարեան օրերից իվեր (1848 թ.) ջերմ ու կարմիր, կատաստրոֆային յեղափոխական էր։ Պատմութեան բոլոր նշանաւոր դրուագներում նա Մարքսի հետ է, նրա պէս մտածում է, նրա պէս զգում, նրա պէս ոգևորւում և հիասթափւում։ Նա ուզում էր մնալ մինչև վերջ անհաշտ (intransigeant) սոցիալիստ-յեղափոխական, արհամարող մասնակի բարեկարգումների, ատող ամէն տեսակ կոմպրոմիսների, իրաւախոհութիւնների՝ բուրժուազիայի տարրերի հետ։ Ամէն բան կամ ոչի՛նչ... Alles oder Nichts! Հեգելեան օրէնքով, ժխտման ժխտումի (Negation der Negation) ճակատագրական կանոնի համաձայն՝ միևնոյն է վաղ թէ ուշ վրայ է հասնելու անխուսափելի ու փրկարար տագնապը, երկու մեծ դասակարգերը—բուրժուազիա և պրոլետարիատ—իրերի ֆատալ անհրաժեշտութեամբ կանգնելու են դէմ առ դէմ սուր ու մոլեգին հակառակութեան մէջ և պայթելու է կատաստրոֆը և ստեղծելու է նոր աշխարհը... Այսպէս էր մարքսիզմի կլասսիկ ըմբռնումը։ Ամէն բան կամ ոչի՛նչ... 1887 թ.ին, Zur Wohnungsfrage խորագրով իր դրուածքի առաջաբանում Ինգելս դատապարտում է այն սոցիալիստներին, որոնք ձգտում են դէպի իրենց նպատակը սոցիալական ռէֆորմներով... անուանում է այդ տեսակ սոցիալիզմը՝ մանր-բուրժուական **։

Սակայն ընդամենը 8 տարուց յետոյ, 1895-ին, իր մահուան նախօրեակին, նոյն Ինգելսը հանդիսաւոր կերպով ժխտեց իր այդ կարծիքը և յայտարարեց ամբողջ մարքսիզմը իբրև ռէֆորմիստ, բաբենսրդչական մի վարդապետութիւն, նա քարոզեց իր հեղինակաւոր ձայնով ամբողջ մարքսիստական շիջային՝ ընդունել „մանր բուրժուազիական“ տաքտիկան, որից դուրս՝ չէիք փրկուիր...

Դա այն հուշակաւոր խոստովանութիւնն է, որ պէտք է համարել մարքսիզմի վերջին խօսքը և որ հրատարակուեց իբրև նախաբան „Die Klassenkämpfe in Frankreich 1848 bis 1850“ դրուածքի։ „Պատմութիւնը չարդարացրեց մեզ և բոլոր նրանց, որոնք մեզ պէս էին մտածում“, ասում է այդտեղ Ֆրիդրիխ Ինգելսը*, ակնարկելով նաև իր ընկեր Մարքսի վրայ, որը ունեցել է նոյն պատրանքները՝ մօտալուտ կատաստրոֆի, սոցիալիզմի վաղահաս յաղթութեան մասին։ Անկարելի է ասում է նա յեղաշրջել հասարակութիւնը „մի հատիկ մեծ ճակատամարտով“, այլ անհրաժեշտ է „դժուարին, յամառ ու յարատև պայքար, որ առաջացնէ մեզ դիրքից-դիրք աստիճանաբար“։ Անցել է ժամանակը—շարունակում է Ինգելս—երբ յեղափոխութիւնները կատարւում էին անակնկալ մի հարուածով, չընչին ու գիտակից փոքրամասնութեան ձեռքով, որ դլուխ էր կանգնում անդիտակից մասսաների... Այնտեղ, ուր հասարակական օրգանիզմը լիակատար յեղաշրջման խնդիր է դրուած՝ այնտեղ անհրաժեշտ է գործակից ունենալ գիտակից մասսաներ“...

Դատապարտելով հին տաքտիկան, Ինգելս քարոզում է նորը, միակ խելացին ու նպատակայարմարը։ Դա „օրինական նուիրումն է“, խաղաղ պայքարը պարլամենտական հողվրայ, ընտրողական քուէներով։ Դա ռէֆորմիստական ճանապարհն է։

Այդպիսով մարքսիզմը իր զարգացման վերջին էտապում ջատագովում է այն տաքտիկան, որ ինքն իսկ դատապարտում էր մի ժամանակ, իբրև թուլամտութիւն հակայեղափոխական, իբրև օպպորտունիստ ու մանր-բուրժուական։ Եւ այդ ջատագոված ռէֆորմիստական տաքտիկայի ամենահաւատարիմ հետևողն է ներկայումս գերմանական սոցիալ-դեմոկրատիան։ Այդ խաղաղ, օրինական գործելակերպի հարազատ թարգմանն է Վիլհելմ Լիբկնեխտի՝ ամենայեղափոխական սոցիալ-դեմոկրատի նշանաւոր խօսքը արտասանած 1897 թ.ին, Համբուրգի պարտայտագում.

„Մեր կուսակցական կեանքի սկզբում մենք գնացինք Բայխատագ, որպէսզի ծառայեցնենք պարլամենտական ամբիոնը բայառատպէս մեր գաղափարների պրոպագանդին։ Սակայն շուտով յայտնուեցինք գործնական հողի վրայ։ Մենք տեսանք, որ ներկայ հասարակութեան մէջ տիրող չարիքը ինչ որ այլ բան է, քան սոսկ առիթ՝ սիրուն ճառեր արտասանելու, և ամենաուժեղ ու կատաղի ճառերն անգամ չեն կարող բառնալ այդ չարիքը։ Մենք տեսանք որ էական պարտաւորութիւնն է՝ որևէ բան անել գործնական հողի վրայ“...*։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԲԱՂԷՇԻ ՎԻԼԱՅԷԹԻ ՎԻՃԱԿԸ 1907 ԹՒԻՆ

I

ԲԱՂԷՇ, 1 Մարտի 1908

Մօտաւոր անցեալում, „վեց վիլայէթների“ մէջ, մասնաւորապէս հայ կեանքի համանկարը կը կազմէ մէկը—թերևս ամենէն անողոքն ու ճգնաժամայինը—այն փոթորկալից և արիւնալից շրջաններէն, որոնց միշտ ականատես եղեր է հայը իր դարաւոր պատմութեան երկար ու ձիգ ընթացքին մէջ։ Խանդավառօրէն յուսալից լինելով մէկտեղ մեր տոհմային կենսունակութեան որուն անհերքելի ապացոյցները ծանօթ են, սակայն չէ կարելի անտեսել քաղաքական այն աշխարհահայեացքը հանդէպ հայ ժողովրդին, որ թիւրք կառավարութիւնը դիւային և մեթոդիկ ծրագրով մը գործ կը դնէ։

Իմ ուսումնասիրութիւնս պիտի սահմանափակեմ միայն Բաղէշի Վիլայէթի շուրջը և ներկայացնել լրացող 1907 տարւոյն մէջ հայ կեանքի քաղաքական, տնտեսական և ընկերական պայմանները ու պատկերը, ուրկէ կարելի է հետևցնել նաև միւս վիլայէթներուն վիճակը։

Անկասկած է որ հայ ժողովուրդը առ հասարակ կորսնցուցած է իր անտեսական անկախութիւնը և բացառապէս վերջի երկու տարիներու ընթացքում հասել է նիւթական և տնտեսական այնպիսի պայմաններու որ երևակայել չէ կարելի։

Մեծ ջարդերէն դեռ քանի մը տարիներ վերջ հայ գիւղային ազգաբնակութիւնը կը վայելէր տնտեսական

* Բերնշտայն ծանուցանում է այդ *Neue Zeit*-ի 1897—98 թ. 750 եր.։ Իսկ մենք հաղում ենք այդ միտքը պրոֆ. Մասարիկի գրուածքից՝ „Սոցիալիստական հասարակութեան հիմունքները“։

** Բաղում ենք նոյն Մասարիկից։

* Դրուածքը ձեռքի տակ չունենալով, հաղում ենք *Ivanoe Bonomi*-ի „*Le vie nuove del socialismo*“ աշխատութիւնից։

* Բաղ. *Bonomi, Vie nuove del socialismo*, եր. 53։

համեմատօրէն տանելի կեանք, որ քաշ կուտար „չորս ծայրերը հեշտիւ իրար բերելով“, իբր սեփականատէր, երկրագործ կամ խաշնարած։ Սակայն վերջին երկու երեք տարիներու մէջ քաղաքական բանդիչ ազդակները ուժգնօրէն միացած հալածանքներուն, խլեցին հայէն իր տնտեսական անկախութեան վերջին մնացորդները։ Քաղաքական ստրկութեան միացաւ տնտեսական գերութիւնը։

Ամենէն վշտաբեր և մտահոգիչ հանգամանքը այն է որ հայ ժողովրդի բնաջնջման դէմ յարուած մեքենան, իր կործանիչ դերին մէջ քաջալերուած՝ աւելի հրեշամիտ հնարքներով կը ջանայ բնաջինջ ընել Եըլդըզի խելագարին արիւնռուշտ երևակայութեան մէջ գոյութիւն ունեցող հայկական վտանգը։

Ժամանակագրական կարգով մէջ կը բերեմ տիպական անցքերը և դէպքերը՝ որոնց տկանատես եղաւ Բաղէշ վիլայէթի հայութիւնը։

Քրդական կռիւ Ախլաթի մէջ.—Յունուարի սկիզբները Ախլաթի Թեղուտ գիւղին մէջ քիւրդ ցեղային կռիւներ պատահեցան։ Երբեմնի չարագործ Մուրոյի տղաքները, երկուքն ալ Համիտիէ սպաներ, արիւնռուշտ ընդհարում մ՚ունեցան իրարու հետ, հին ոխի մը հետևանքով։ Մօտակայ հայ գիւղերը տուժեցին այդ կռուին պատասխանատուութիւնը։ „Կարգը վերահաստատելու“ համար տեղին վրայ ղրկուած հարիւրէն աւելի սիւվարի „ճանպէզլարները“, ամսոյ մը չափ թշուառ հայ ժողովրդի վզին նստան, մանաւանդ Սոխորդ, Թեղուտ, Բրխու և Կարմունջ հայ գեղերում, և ամենախստապահանջ կերպով հատցուցին ժողովրդին հացահատիկը, գարին, խոտը և յարդը և սովի մատնեցին այդ բնակչութիւնը իրենց տաւարներով։

Անկողին անուն կրող գզգզած կապերտները ու ծածկոցները, գիւղացիին արդէն մաշած բրդէ գուլպաները, անոր կաշիէ տրեխները և անոր հագուստները յափշտակեցին այդ անախորժ և խուժդուժ հիւրերը։ Հայ գիւղացին լռեցուց իր մանուկին ճիչն ու աղաղակը, պանիրն ու թանը „ճանպիզար“ ոստիկաններուն հրամցնելու համար, այսպիսով գէթ աստիճան մը մեղմացնելու այդ դահիճներուն, նոյնիսկ իր երդիքին տակ իր ընտանեկան պատուին, իր կրօնին ու նուիրականութեանց դէմ տեղացող հայհոյանքներն ու նախատինքները։

Ոստիկաններու ըմբոստացնող այս բարբարոսութիւնները, գիւղացիներու բողոքներու հանդէպ կառավարութեան ցոյց տուած լիրբ անտարբերութիւնը խոր և ցնցող տպաւորութիւն գործեցին նոյնիսկ թիւրք զգայուն պաշտօնեաներու վրայ։

Այդ դէպքերէն տասն և հինգ օր վերջ փետրուարին, կառավարական պաշտօնով Պուլանըգ ղրկուած բաղէշցի տխրահռչակ հաճի Ղեճմէդդին և իր հետևորդները նոյն տառապանքներուն ու կեղեքումներուն ենթարկեցին—կարծես գազանութեան մրցում մը ըլլար—Բաղէշի անմիջական շրջակայքի, Ախլաթի և Պուլանըխի հայերը։

Երբ գետինը թանձր ձիւնով ծածկուած անանցանելի կը դառնայ ձիաւորներուն՝ հոս միակ միջոցը կը մնայ, փոխադրութեան համար, տեղական բալխիրները, որը կը քաշեն մարդիկ. դիւրին է մակաբերել թէ այդ մեծ նաշնորհը անպայման կը վերաբերի հայերուն։ Յարգելի հաճին և իր շքախումբը Պուլանըխ փոխադրուեցաւ այդ բալխիրներով, հայերու նուիրական պարտքը ըլլալով տարապարհակ կատարել այդ աշխատութիւնը ձիմբան սառեցնող բուքին և ձիւնին։ Այդ դէպքէն յետոյ երջանիկ հաճիին բալխիրներուն լծուող երիտասարդներէն քանիսը չարաչար մահով վերջացան, որովհետև խեղճերը սառած էին ձեռքերնէն և ոտքերնէն։

Այս եղած է հային սև բախտը, այժմ աւելի քան երբէք։ Ամէն անգամ երբ մեծ թուով զինուոր փոխադրուի, պաշտօնեայ կամ ոստիկան ճամբորդէ, հայը պէտք է ինքզինքը ամէն զրկանքի ենթարկէ և տրադրէ իր արիւնկզակ թշնամին հիւրընկալելու, սնուանելու և գոհացնելու ամէն կերպով։ Իբր վարձատրութիւն՝ հայհոյանք, նախատինք միայն, հազիւ երբէք գոհունակութեան սուտ ծիծաղ մը կամ շնորհակալութեան չոր բառ մը։

Ֆէրիտ փաշան և հայ յեղափոխութիւնը.—1907 տարւոյն Բաղէշի վալի կըլլայ Ֆէրիդ փաշան. իր իսկ խոստովանութիւնով, ոստիկանութեան ստորնագոյն աստիճաններէն բարձրացած, և առաջացած խայտառակ հաճոյակատարութիւններով ու անարգ միջնորդութիւններով։ Այս ոստիկան-լրտեսը, տեղիս վալի ըլլալով, ձեռք առաւ պղտոր ջուրի մէջ ձուկ որսալու քաղաքականութիւնը, որուն լծուած են բոլոր թիւրք պաշտօնեաները. ստեղծեց անգոյ յեղափոխութեան ուրուականը, որպէսզի պատրակ գտնէր հայ ժողովուրդը հալածելու և այսպիսով աւելի յարգ ու փառք շահելու։ Իր դերը պարզ „խառնակիչի“ դերն էր, իր դէմը ունենալով իգացած պաշտօնէութիւն մը, և անմեղունչ ու արիւնաքամ հայ ժողովուրդը։

Փետրուարի կիսուն մէկ քանի կարծեցեալ յեղափոխականներ ձերբակալեցին Պուլանըխի մէջ, այս առթիւ գիւղացիներէն գաղտնիքներ խլելու համար գործադրուած չարչարանքները անցան ամէն չափ ու սահման։ Ֆէրիդ փաշան զբաղում գտած էր իր գործունէութեան ապացոյցը տալու համար Եըլդըզին, ուստի Պօլիս ղրկեց կարգ մը լուսանկարներ իր ոճրային շահատակութիւններուն համար ներբողներ և վարձատրութիւններ ձեռք բերելու համար իր գաղանացած փադիշահէն։

Դրամական տագնապը.—Արդէն Բաղէշի վիլայէթի դրամական տագնապը սուր կերպարանք առած էր... Ֆէրիդ աւելի զարկ տուաւ այդ տագնապին իր շահադիտական արկածախնդրութիւնով։ 1906-ի վերջերը սուլթանական մէկ իրատէ կը հրամայէր հաւաքել սրբուած արծաթէ մանրուքները, և փոխարէն նոր դրամ տալ։ Այդ գործողութիւնը ընդունելի էր մինչև 1907 մարտին։ Ֆէրիդը իրագէն յայտարարեց ժողովրդին բայց վերջին տրամադրութիւնը գաղտնի պահեց. իսկ միւս կողմէն գանձային պաշտօնեաներուն արգիլեց դրամի փոխանակութիւնը։ Վրայ հասաւ 1907-ի մարտը, հրաման եկաւ որ սրբուած դրամները այլևս արծաթի գնով ծախու կառնուին, ինչ որ $^2/_3$ գինը կը նշանակէ։ Այդ դրամներու շրջաբերութիւնը արգիլուեց,—և գանձն ալ կառարկէր որ դրամ չունի նոյնիսկ կէս գնով հաւաքելու համար սրբուած դրամները։

Առուտուրը և փոխանակութիւնը անդարմանելի հարուած կրեցին Ֆէրիդի այդ նենգամտութենէն. Թիւրքերը և քիւրդերը առհասարակ հայերուն կլլեցուցին այդ դրամները բռնի և խաբէութիւնով, այնպէս որ կարելի է ըսել թէ այդ դրամները ամբողջովին հայերուն քով հաւաքուեցան: Պէտք է երևակայել թէ պաշտօնական զեղծումով գոյացած 2000 ոսկի վնասը շատ սուղի նստաւ կարգ մը խանութպաններուն և օրը օրին հացի ապրող բանուոր դասին համար: Մէկ գիւղացի մէկ օր աշխատելով շալակ մը կամ բեռ մը փայտ կը բերէր քաղաք ծախելու, իր ընտանիքին օրապահիկը հայթայթելու կամ տուրքի վճարելու համար: Քիւրդը կը սակարկէ փայտը, և երբ փայտը ներս կը լեցնէ հայուն կուտայ սրբուած դրամ: Ոևէ առարկութիւն չպէտք է ապա թէ ոչ ետևէն ծեծը, հայհոյանքը կը հասնի: Հարիւրաւոր այսպիսի օրինակներ պատահեցան խանութպաններու և արհեստաւորներու հետ: Ֆէրիդ փաշան այդ շահադիտութենէն բաժին հանեց Ելըդըլզի բ. քարտուղար և իր պաշտպան Իզզէթ փաշային, անոր ընծայ ուղարկելով արծաթէ խոշոր մատուցարան մը, 12 արծաթէ թէյի գաւաթներ, շաքարաման. պարսկական հին գորգեր, նրբակերտ ոսկիէ ժամը, արծաթ աստանդակներ, խարազան և այլն և այլն:

Գաղթականութեան հարցը — Առաձգականութեան օրէնքով որոշ մարմիններ որոշ չափով կըրնան թեքուիլ և դիմադրել ճնշումի, չափը անցնելիս առաձգական մարմինը կը կորսնցնէ իր յատկութիւնը: Բաղէշի վիլայէթի հայ տարրը այդ օրէնքով Մուշի, Սասունի, Պուլանըխի և Մանազկերտի մէջ, ընդերկար ճնշումի տակ կարող է յանգիլ յոյժ ցաւալի հետեւանքներու:

Մասնաւորապէս այս վիլայէթի հայութիւնը, տարիներու ընթացքում և անվկանդ կորովով շարունակեց համեմատաբար իր վերելքը դէպի Գողգոթան, անսպառ կենսունակութիւնով ընթացաւ ան իր մարտիրոսութեան տատասկոտ և դժուարակոխ ճանապարհը և ահա հասեր է այն քայլը որ պիտի որոշէ անոր գոյութեան խնդիրը:

Տասնեակ տարիներու առաջեան իր համեմատաբար տանելի պայմաններէն՝ այժմ հասած է ամենայետին թըշուառութեան ու մերկութեան, ծառայ և ստրուկ դարձած՝ իր երբեմն պահած ու կերակրած հօտաղներուն ու ծառաներուն, ան հասած է առաձգականութեան բեկման կէտին: Բազմաչարչար. Հայրենիքի վերածնութեան շողշողուն իդէալը իր հետապնդումներուն մէջ, ան կորսնցուց ամէն ինչ և անոր տանջանքները յանգեցան բացասական արդիւնքի, և երկունքի արշալոյսը անթափանցելի ամպերու ետին քօղարկուած կարծելով, յիշեալ գաւառներու հայերը, թափ տալով տարիներէ ի վեր զիրենք կաշկանդող երկաթէ կապանքները, հիասթափուած՝ փոթորկածին գաղափար մը երկնեցին — դաւաճանելով իրենց պապենական երդիքներուն ու գերեզմաններուն, և օգտուելով „բարեխնամ" սուլթանի շնորհած արտօնութենէն՝ վճռեցին գաղթել Կովկաս ազատ օր, պայծառ արև տեսնելու համար:

Հեռանկարը շողշողուն էր և գրաւիչ վշտի և արտասուքի աշխարհի հայուն համար, պայթեց փոթորիկը և մէկ ամսուայ ընթացքին մէջ Բաղէշ եկաւ 100,000 ազգաբնակութիւն ներկայացնող հայ պատգամաւորութիւն մը Մշոյ դաշտէն ու քաղաքէն, Սասունէն, Վարդոյէն, Պուլանըխէն, Ախլաթէն և նոյնիսկ Մոգկանէն: Ֆէրիտ սոսկաց իր որջին մէջ և մէկդի թողլով իր գազանային բնազդները և հայատեաց անմատչելիութիւնը մօտեցաւ հայ գիւղացիներուն, համբերութեամբ լսեց անոնց բոլոր ցաւերը, գանգատները և գաղթականութեան դիմելու անոնց պատճառները: Դարերու ստրկական երկչոտութեան ու պատկառանքի քօղը թօթափած, անզուսպ ու արդար զայրոյթէ մղուած, անոնք մերկացուցին կառավարական պաշտօնեաներու, քիւրդերու գազանութիւնները, յայտնեցին իրենց կեանքին անտանելի բեռ մըլլալը և հետևաբար ամէն զոհողութիւնով Կովկաս գաղթելու իրենց վճռականութիւնը:

Միաժամանակ հրապարակ ելաւ նաև Բաղէշի ռուսական հիւպատոսը Հիրքօֆ, որուն դիմեր էին գեղացիները անցագիր ստանալու համար, իբրև „Արևելքի քրիստոնէից ռուսական պաշտպանի": Հիրքօֆ ամէն ուղղակի ու անուղղակի միջոցներով քաջալերեց գեղացիները: Ի՞նչ գրաւիչ հրապոյր ունի արհամարուած ու ռամիկ հայ գիւղացու համար թարգման Պետրոսի հետևեալ խօսքերը, որ ան կը գոռար գիւղացիներու երեսին էֆէնդիական ձայնով մը, „ծօ՛, դուք աւանակի պէս ապրեցաք ու աւանակի պէս պիտի մեռնիք. Կովկաս գացէք ուր ձեր զաւակները քանի մը տարիէն կըլլան յիսնապետ և հարիւրապետ ռուսական բանակին մէջ, ձեզի առատ հողեր, անտառներ ու անասուններ կը տրուին, օրական 60 փարայի ռոճիկ և այլն և այլն":

Ռուսական նենգամիտ և չարակամ դիւանագիտութեան մեզ, հայերուս և մեր արիւնոտ դատին հասցուցած հարուածները սովորաբար անծանօթ են այս կողմերու տգէտ հայ գիւղացիներուն: Ֆիզիքապէս, բարոյապէս և տնտեսապէս ուժասպառ, և տարեց տարի բարդացող կեանքի սպառող տառապանքներէն զզուած, այդ խեղճերը խաբուելով ռուս հիւպատոսի չարամիտ խոստումներէն, օրերով աստանդական թափառեցան Բաղէշի մէջ, անմշակ թողլով իրենց բերրի հողերը և հետապնդելով անիրագործելի փափաք մը: Հետևանքը այն եղաւ որ արմտիքներու անսովոր սղութիւն առաջ եկաւ, գրեթէ սով մը: Մէկ տարի առաջ 10—12 դահեկան արժող ցորենը այժմ 25 դահեկան է և հետզհետէ ալ կը բարձրանայ, իսկ ռուս հիւպատոսը ստացաւ միխաչ, ս. Աննայի բ. կարգը և քանի մը ամիս վերջն ալ գ. կարգի օսմանիէ շքանշան:

Դժբախտութիւն է որ ամբողջ բազմատանջ հասարակութիւն մը, զուրկ ոևէ լուրջ առաջնորդէ խաղալիք դարձաւ մէկ աննկարագիր և իր սեփական կինն անգամ կառավարել չկրցող Հիրքօֆի մը:

Մայիսէն յետոյ անցաւ վարուցանի եղանակը, գիւղացիները զգացին իրենց խոշոր սխալը, և այնպէս մղուած զիրենք անդադար խթանող կեղեքումներէն և կսկիծներէն, նորէն սիրեցին յուսալ և դիմել Կովկասեան Էլտօրատօն... Յուսացին — կը յուսան դեռ. մինչդեռ պր. Հիրքօֆ, իր շքանշան խաչը ստանալէ յետոյ հակադարձ ծայրայեղութիւնով մը, և հակառակ ապրիլ-մայիսին ինպաստ հայ տառապեալներուն մղած բուռն ու ահեղ պայքարին, հայերը անուանեց ստախօս, յերիւրող, խռովարար և ահա իսկոյն արժանացաւ

Ապդիւլ Համիդի շնորհներուն ի վարձատրութիւն իր գործած այնքան վնասներուն, աղէտներուն և չարիքներուն։ Ահա այս էր ռուսական դիւանագիտութեան ներկայացուցչի անամօթ և արջու խաղը—դժբախտ հայ ժողովրդի գլխին։

Բաղէշի երկրաշարժը. Մարտի վերջերը պատահեցաւ աղէտալի երկրաշարժ մը, երբ դեռ ձիւնը կը ծածկէր գետինը։ Ժողովրդի տառապանքները և միաժամանակ դրամական տագնապի հետ զուգադիպութիւնը, մեծ թշուառութեան և մորմոքիչ տեսարաններու պատճառ եղան։ Դեռ մինչև այսօր խարխուլ և աւերակ կը մնան շատ տուներ՝ որոնց տէրերը անկարող վերաշինելու իրենց փլած տուները, անպատսպար մնացին այս ձմրան ցուրտին և ձեան փոթորիկներուն ենթակայ։

Ելդըզը եղեռնակեացը իր „կայսերական հոգածութեամբ" 3000 ոսկի ղրկեց երկրաշարժի արկածեալներուն։ Այդ գումարին մէջ համեղ խոշոր պատառ մը կարծեց տեսնել Ֆէրիդ փաշան, ինդրիկներ խաղաց, յետաձգեց նպաստի բաշխումը մինչև որ իսլամական խուժանի կատաղութիւնը հրաւիրեց իր վրայ և վանուեցաւ Բաղէշէն թատերական խայտառակութեամբ։ Այդ դրամը բաշխեցաւ սեպտեմբերին ուրկէ օգտուեցան մեծապէս Բաղէշի վայրագ և կալուածատէր չէյխեր, հարուստ աւազակ աղաներ ու պաշտօնեաներ։ Թիւրք թշուառ մասսային հետ նաև հայեր ստացան մէկ չնչին բաժին։ Նոյնպէս հայ աղաները այս գործին մէջ, շատ աղտոտ և շահախնդրական դեր մ'ունեցան։

ՋՆԴՕ

Զոհը՝ Դասըմ բէկի դաւաճանութեան։

(Տե՛ս կենսագրականը „Դրօշակի" 1908 3-րդ համարում).

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, 27 փետրուար

Ղատերուն յայտնի ըլլալու է այն շահատակութիւնները, որ կատարուած են Տիգրանակերտի շրջանին մէջ ապրող—աւելի ճիշտ իշխող—Համիդիյէի պետ Իբրահիմ փաշայի կողմէն։ Ծանօթ է նոյնպէս թէ տեղւոյս թիւրքերը վրդովւած ցոյցեր էին ըրած և հեռագրած Պօլիս, որ վերջ տրուի փաշային մշտատև չարագործութիւններուն։ Պօլիսը շարժիլ և արգիլիչ միջոցներ ձեռք առնել ձևացուց. սկսաւ զօրքերու շարժում մը որ չորս կողմէն կուգային և կը լեցուէին քաղաքի մէջ. բայց ինչո՞ւ, ոչ ոք չէր հասկնար, քանի որ Իբրահիմ փաշան իր տեղն էր և ոչ ոք չէր ուզեր զայն անհանգստացնել, իսկ ասդին, զօրքը եղաւ Տիգրանակերտի հայութեան գլխին մեծ փորձանք մը։ Քաղաքի ամէն մէկ մասին մէջ ամէն օր զօրքերու կողմէն կը կատարուին անկարգութիւններ, գողութիւններ և սրիկայութիւններ։ Զօրքի թիւը այժմ կը հասնի 2700-ի և հետզհետէ նոր վաշտեր կը հասնին։ Ներկայ զօրքի 1200 հոգին զետեղւած են Տէլիլէր խանի մէջ՝ ճիշտ հայոց մեծ թաղի Արևմտեան կողմը, 800 հոգին հայոց թաղի վրայ Չիֆթէ խան կոչւած տեղը և 700 հոգին քաղաքէն դուրս գտնուած զօրանոցին մէջ։ Սարսափը ընդհանուր է։ Միւս կողմէն նոր փոխադրուած թնդանօթներ քաղաքին միջնաբերդին վրայ զետեղելու համար նոր ճամբայ կը շինուի միջնաբերդի թումբին շուրջը։ Սկսած են հայոց թաղերու նեղ փողոցները լայնցնել և այժմ հասան մինչև Պալըգճըլար փողոցի անկիւնը, քակեցին Շէյխ Մէթար ըսւած տեղը և քանդել սկսեցին նոյնպէս հայոց ս. Կիրակոս եկեղեցին։

ՍՎԱԶ, 27 մարտ

Ասկէ մէկ ամիս առաջ տեղւոյս զօրքերու բաժնէն րէտիֆները հաւաքեցին մօտ 7—800 հոգի, որոնք հոս կսպասեն, և միշտ զինավարժութիւն կընեն շուտով ճամբայ ելլելու համար։ Նոր հաւաքւած ատեննին, բաւական բարբարոսութիւններ կը գործէին, այժմ վերէն եկած հրահանգի համաձայն շատ աչք պատող արարքի մէջ չեն համարձակիր գտնուիլ։

Շրջականներէն ետևէ ետև օրական 150—200 զօրք կը հասնին և միւս օրը Խարբերդ և Տիգրանակերտ կուղևորւին։ Տիրող ղրոյցին նայելով, տեղւոյս րէտիֆներն ալ այդ կողմերը պիտի ղրկւին։

Տեղւոյս կուսակալը 15 օր առաջ Ամասիա մեկնեցաւ իբր թէ օդափոխութեան համար, ինչ որ հաւանական կը թւի. սակայն կը խօսւի նաև թէ Պօլիս կը մեկնի ներկայ ըլլալու համար տեղի ունենալիք կառավարական մեծ խորհրդի մը։

Կուսակալին մեկնումէն յետոյ տարաձայնւեցաւ թէ նոր ջարդ տեղի պիտի ունենայ և շատ մը վախցողներ Անապատի վանքը ապաստանած էին, մաս մըն ալ տուներէն դուրս չէին ելած. այդ տարաձայնութիւնը այժմ վերացած է։

Առևտուրի նշոյլը չկայ, հրապարակի վրայ ճանձ չտղար, կեանքը կայուն վիճակ մը ստացած է, ցորենը շատ սղած է, օրական հացի դրամ շահողները շատ

ու շատ նեղութեան մէջ են, որովհետև վարվաստակ չըկայ ոչ միայն հաց, գետնախնձոր ալ չեն կրնար գտնել շատ հայրեր իրենց զաւակին տալու համար։

Բէտիֆի և գուրայի զօրքերուն հաւաքելուն պատճառը կը վերագրուի 1) ռուս-թրքական մօտալուտ պատերազմի մը կամ 2) Պարսկաստանի հետ պատերազմի և 3) Տէրսիմի քիւրդերը զսպելու համար։

Այստեղ, ինչպէս և առհասարակ Ասիական Թիւրքիոյ ամէն կողմը, կառավարութեան ամէն մէկ քայլը խորհրդաւոր և մութ կերպարանք մը ունի, կարծես Թիւրք կառավարութիւնը անվերջ դաւադրութիւն մը կը սարքէ իր ժողովրդի դէմ։ Պօլսոյ թերթերը ոչինչ կը գրեն կառավարական գործերու մասին, ժողովուրդը բոլորովին անլեզու և անտեղեակ է իրերի իսկական դրութեան մասին, որով ուէ երևոյթ տեղի կունայ սուտ իրաւ հազար ու մէկ ենթադրութիւններու, որոնց ստիպուած ենք մտիկ ընել մեր լարուած և ահաբեկ հետաքրքրութեան մասով գոհացում տալու համար և միշտ սպասելով չարաղէտ եղքի մը, այնքան սև կը տեսնենք կեանքը։

Ամէն պարագայի մէջ կառավարութեան փութկոտ և տենդոտ գործունէութիւնը ամէն տեղ կասկած կարթնցնէ որ օդին մէջ լուրջ բան մը կը դառնայ։

ՀԱԼԷՊ, 2 ապրիլ

Կառավարութիւնը կարգ մը բարձրաստիճան պաշտօնեաներ ղրկած էր որ կերպով մը ձերբակալեն Իպրահիմ փաշան, սակայն չը յաջողելով իրեն վնաս հասցնել, խարդախութիւնով անոր փեսան և ազգականներէն մէկ քանին հոս բանտարկած էին։ Իպրահիմ փաշան լսելով՝ խիստ բարկացած և պահանջած էր անոնց ազատարձակումը, հակառակ պարագային սպառնալով իր ասպատակութիւնները վերսկսիլ։ Խնդիրը Եըլդըզի Համիդին կը հեռագրուի՝ որ անմիջապէս կը հրամայէ բանտարկեալներու ազատումը և միանգամայն ներում կը շնորհէ Իպրահիմին։

Այստեղ ժողովուրդը ահուդողի մէջ կապրի։ Ապրիլ 3-ին յանկարծ շշուկ ելաւ թէ նորէն թալան պիտի ըլլայ և քանի մը վայրկենի մէջ ամբողջ շուկան գոցուեցաւ, թէև մեծ դէպք չը պատահեցաւ, 4—5 թալանողներու ձերբակալութիւնով խնդիրը փակուեցաւ և խանութները բացուեցան։ Սակայն երեկոյեան ժամը 1-ի միջոցներուն, զինուորական քանոն մը սուրը բաշած և ատրճանակը ձեռքը կսկսի աջ ու ձախ հարուածել և հայհոյել։ Ոստիկանութիւնը կուգայ և պահականոց կառաջնորդէ գինով սպան, որ ամէն հարցաքննութեան ի պատասխան քահքահ կը խնդայ, զինուորական կօմիսէրը ազատ կարձակէ զայն։

Կառավարութիւնը շատ մեծ պատրաստութեան մէջէ. հոս եկաւ գերմանացի քննիչ մը զինուորները կրթելու համար, նոյնպէս ամիս մը առաջ մօտ 1000 ուղտի բեռ ռազմամթերք ղրկուեցաւ դէպի ներսերը, ո՞ւր, յայտնի չէ։

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

XVI

ԴԱՒԱՃԱՆՆԵՐ

Մեռելներ կան որ պէ՛տք է անգամ մը
եւս մեռցնել...։

Ահաւասի՛կ հրեշածին հայ Յուդայ մը եւս որ նոզկանքի օր մը ծնեցաւ...։
Բայց ո՞վ գիտէ, ո՞ր խաւարչտին, ո՞ր զզուելի և ո՞ր խուժանամատոյց աղիճին արգանդէն,
Եւ ի՞նչ անէծքի, ի՞նչ դժնէ վատութեան, ի՞նչ քստմնելի գիշերուան մը գարշանքին մէջ,
Իր դժխեմ հայրը, կարողացաւ, չարաշուքօրէն այդ գեհենի որդին սաղմնաւորել։

Դժոխատիպ դէմքով կին մը, տուիփին կատաղանքէն, իր մխին տիղմը կը տարածէ,
Գերեզմանօրէն ահաւոր խրճիթի մը դագաղաշէն տախտակամածին վրայ,
Եւ մարդ մը, ծամածուռ, խուժդուժ, շիլ, ապաժառանգ, խաթարեալ և սապատող,
Մեղսակից խաւարը ճեղքելէն, և լորցունքոտ և շնչասպառ և անասնակերպ՝

Տարտարոսեան իժի մը հանգոյն, փորին վրայ սողալով իգութեան մը կը մօտենայ...։
Եւ ապականութեանց զոյգը կը գալարուի և ահա՛ իրենց ոճրալից ուղեղին գուիներէն,
Ահագնօրէն թաւալագլոր կանցնին, կը սպաննեն, կը ծնին և կը զուգուին,
Դաւաճանութեան և չարիքի և մատնութեան բոլոր դևերը դամբանածին...։

Եւ նզովեալն իր արարչահիւթը կը հեղու և սոսկալի սաղմը կը բեղմնաւորուի...։
Դուրսը, հովերն անմեղ և ապառնի մահեր կ՚երգեն։ Եւ երկու անիծեալ և ամօթապարտ մարմինները,

Իրենց խշտեակին վրայ, ծագող լոյսէն և խղճմտանքին հնչող պղինձներէն պատուհասուած՝
Պատանքի մը պէս, իրենց ծածկոյթովը, պիղծ տեսողութիւնին կը ծածկեն...։

Ժամանակին կոյր խաւարը կը յաջորդէ կոյր խաւարին և երկու էակները քարերու պէս լուռ են,
Մ՚եղաւորին դատապարտութեամբը լուռ՝ և դիակներու մեռելութեամբն անխօս,
Մինչդեռ, վայրագ, աններդաշնակ և անգիտակից բնութեան ուժը իր օրէնքին շրջանը կը շրջի,
Իր խաւերուն մէջ և նախճիր և կործանում և գեղեցկութիւն և մահ և կեանք ստեղծելով...։

Բայց արիւնկզակ արուն, ցնորակոծօրէն, իր բռունցքովն իր խիղճը կուզէ խեղդել,
Եւ եղկելի էգը, մղձաւանջներու մէջ, ժամէ ժամ դերբնապէս կ՚այլանդակուի,
Նայուածքները կը փոսանան, մարմինը կը նեխի և ապագայ ոճիրին արեան շոգին տեսնելով՝
Կը զգայ որ կողերուն տակ արդէն շարժիլ սկսածէ իր կղկղանքին սողունը ճիրանաւոր։

Աղիտաբեր երկունքի և սանդարամետեան գալարումներու ժամը հնչած է,
Սև օձերու անտառնե՞ր են որ մօրը ընդերքին մէջ անոր աղիքները կը կրծոտեն...
Եւ կարծես լոյսէն, մարդերէն, անջրպետէն և հաւատքէն է որ կը սոսկայ,
Ու մանուկ ոճիրը՝ յղացող ոճիրին հետ զիրար կուզեն մեռցնել...։ Բայց զեռունը կը ծնի...

Ճիւաղը կը ծնի...։ Ու մայրը զայն կը դիեցնէ իր ստինքներուն մութ թարախովը թունաւոր,
Եւ ո՛չ մէկ պատուհաս, ո՛չ մէկ պատիժ, ո՛չ մէկ բարերար ոճիր, ո՛չ մէկ կործանիչ ճակատագիր,
Չեն գար այդ պիղծ տանիքը մոխրացնելու, այդ աչքերը խաւարելու, այդ էութիւններն յօշոտելու,
Եւ ասոնք կը համարձակին ապրիլ, շնչել, սնանիլ, պայծառները ողջունել և անոնց նայելով ժպտիլ...։

Դաւաճանե՞ր, ինչպէս կրցաք դուք արևին լոյսը վայելել և աստուածային աստղերուն տակէն անցնիլ...
Ի՞նչպէս առաւօտին մէջ, վարդերուն վրայ թառած սոխակներու դայլայլանքին ունկնդրեցիք,
Ի՞նչպէս առանց ձեր դերեզմանին փոսը փորելու, կարողացաք արշալոյսներուն առջև աչք բանալ...
Եւ ի՞նչպէս կրցաք Իդէալ բառն արտասանել և անոր ծառայելանոր ծնրադրել և օր մը այսպէս դաւաճանել զայն։

Եւ մանաւանդ ի՞նչպիսի քայլերով գաղափարի ոսկեհաշար խորաններու պաշտամունքին յառաջացաք,
Ինչպէս յանդգնեցաք ազատութեան ջահակիր,արդարութեան քրմաւոր և եղբայրութեան ջատագով հանդիսանալ,
Ինչպէս չը զարհուրեցաք ճշմարիտներու հոգիէն դուրս ճառագայթող ճաճանչներէն,
Եւ ի՞նչպէս մեծհաւատքին կռանիդէ սանդուխէն, առանց փշրուելու, կրցաք բայլ մը առնել դէպ ի՞վեր։

Ա՜հ, չնաշխարհիկ մարտնչումներու և անկշռելի ցաւի՝ Պատմութեան այն էջը կարմիր՝
Զոր հայկաշունչ քնարիս մրրիկներէն, մտածումս փորձեց մեհեաններ կերտել,
Այսօր՝ ատելութեամբ՝ կայծակնահիւս խարազանս ձեռքերուս մէջն ամրապինդ,
Եւ հրաշէկ երկաթներովս, որչա՜փ կուզէի ձեր դիակներն ես խարանել ո՛վ դաւաճաններ...։

Ե՛ս կուզէի զձեզ խարանել և ե՛ս կուզէի մուրճերուս և կռաններուս կատաղութեանցը տակ,
Ձեր ոսկորներն և ձեր եղեռնագործի ճղճիմ գանկերն աւազնե՛րու նման փշրտել...
Ե՛ս կուզէի զձեզ գարշապարներուս տակ առնել, ե՛ս կուզէի զձեզ մահացնել և ե՛ս վերստեղծել,
Ե՛ս կուզէի զձեզ աստուածաբար հազար անգամ վերստեղծել և ե՛ս կուզէի զձեզ հազար անգամ գե-
րեզմանել...

Եւ, ագռաւներու հոգիներով, կայէնեան կերպարանքներով ձեր շնագայլի վոհմակներն, ա՜հ,
Թիւթիւնճիէֆ, Սենեքերիմ, Ոսոիկան Տիգրան և Արտաշէս, սև Սուքիաս և Կոմիտաս քահանաներ,
Վարդապետ-Մամբրէ, ասորի Կարապետ, Մարգար և դո՛ւն Դ՚Հերցի Հրէշածին Դաւի՛թ,
Ա՜հ, ձեր ժանտաժուտ դիակներն կոյանոցներու ժահրին պէս աչքիս առջև կը տարածուին։

Արդարև ո՛չ ո՛ք չի մտածեց խաչափայտերու վրայ և ապառաժներու ճակտին զձեզ բևեռել,
Շղթաներու ազնուական ծանրութիւնը և ժանգը ձեզի համար փառապսակ մը պիտի ըլլար,
Ինչպէս և թաղծալից և մեռելաշուք բանտերուն մենութիւնը մարմարեղէն պալատ,
Եւ ճշմարտավճիռ սուսերին հարուածն անճշմարիտ և կառափնատը արքայական գահ...։

Ա՜հ մահը, գթութիւն է ձեզ համար և խարոյկներուն հուրը մարտիրոսի փա՜ռք,
Ձեր օրրանը ցեխը եղած է և ձեր օթևանը ճահիճներու ժահրը պէտք է ըլլայ,
Աքցաններով ձեր միսը, հիւլէ առ հիւլէ, ժլատօրէն, ժուժկալօրէն պէտք է քերծել
Եւ տարիներով, կաթիլ-կաթիլ, բաժին հանել, ձեր արիւնէն, նախճիրակեր բօրեններու ծարաւին...։

Այժմ ձեր նողկանքէն փակ աչքերս թո՛ղ բանամ, թո՛ղ գրիչս զետեղեմ և թո՛ղ քնարիս լարերն համբուրեմ,
Եւ՝ առիւծացեմ կորիճներուն, անվեհերներուն, առաքեալներուն, հայրենիքիս զինուորներուն մօտենամ՝
Անոնց յիշատակէն և Սուրբ օրէնքէն աղբիւրուած լոյսերովը և ճակատս և մտածումս և աչքերս լուալով,
կռապաշտօրէն, կեանքիս ամառին մէջէն, կարմիր երգերս հիւսեմ և յստակ մարմարներս քանդակեմ...։

ՍԻԱՄԱՆԹՕ

ԵՒՐՈՊԱՅԻ ԴԱՇ· ՈՒՍԱՆՈՂ· ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հաստատ վճռականութեամբ՝ ինչպէս միշտ, այսուհետև էլ ինտելիգենտ մարդուն վայել դերը խաղալ ազատագրութեան համար մարտնչող ժողովրդի դատի մէջ, Եւրոպայի դաշնակցական ուսանողութիւնը կարևոր գտաւ մի համագումար ունենալ իր ապագայ գործունէութիւնը կազմակերպած, հաստատուն հիմքերի վրայ դնելու համար։ Թէև Եւրոպայի զանազան քաղաքներում միշտ եղել են դաշնակցական ուսանողական խմբեր և անհատներ, որոնցից ոմանք զգալի օգնութիւն են հասցրել կուսակցութեան, բայց, հաւաքուել մի անգամ, իրար տեսնել, ճանաչել, մի ընդհանուր գործունէութեան ծրագիր մշակել, և ապագայ գործունէութեան մի նոր մղում տալ՝ դարձել էր անհրաժեշտութիւն.

Դեռ Եւրոպայի հայ ուսանողական միութեան Բեռնի համագումարում միտք էր ծագել հրաւիրել յատուկ դաշնակցական ուսանողական համագումար։ Ապա այդ միտքը զարգացել էր Ժընեվի „Ջանք“ խմբակի մէջ, իսկ վերջ ի վերջոյ Բեռլինի խմբակին վիճակուեց մի կազմակերպիչ կոմիտէ առաջ բերելու և համագումարի նախաձեռնութիւնը ստանձնելու բախտը։ Այն ուրախալի ընդունելութիւնը, որ Բեռլինի հրաւէրը գտաւ ամեն տեղ և այն բուռն մասնակցութիւնը, որ երևան եկաւ համագումարի ժամանակ, ապացոյց էին, թէ որքան հասունացած էր այդ խնդիրը և որպիսի պահանջ կար ուսանող ընկերների մէջ իրար տեսնելու և ընդհանուր գործունէութեան ծրագիր մշակելու։

Համագումարը տեղի ունեցաւ Ժընևում, ապրիլի 3-ից մինչև 13-ը։ Մասնակցում էին 15 պատգամաւոր 12 քաղաքից· 135 դաշնակցական ուսանողների կողմից։ Բեռլինը մասնակցում էր երկու պատգամաւորով, Ժընևը՝ երեք, Փարիզը՝ մէկ, Լայպցիգը՝ մէկ, Ենան՝ մէկ, Միւնխենը՝ մէկ, Հալլէն՝ մէկ, Բազելը՝ մէկ, Ցիւրիխը՝ մէկ, Բեռնը՝ մէկ, Լօզանը՝ մէկ, Նէօշատէլը՝ մէկ,—բացի սրանից խոստացել էին մասնակցել նաև Բրիւքսէլից և Մօնպէլիէյից, բայց անակնկալ պատճառներով մասնակցութիւնը չը յաջողուեց։ Պարզ է,-որ եթէ սա առաջին համագումարը չը լինէր և նախապէս խմբակների կազմակերպութիւնը հոգացուած լինէր, մասնակցող պատգամաւորների թիւը շատ աւելի կը բարձրանար։

Համագումարը զբաղուեց ներքին կանոնագրի մշակութեամբ. ընտրեց գործադիր մարմին։ Կարդացուեցին նաև Ռեֆերատներ հետևեալ նիւթերի մասին։ 1) Մատերիալիստական պատմահայեցողութիւնը էմպիրիօկրիտիցիզմի դատաստանի առաջ։ 2) Պետութեան և իրաւունքի մասին։ 3) Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան պարտականութիւնները։ 4) Յեղափոխութիւն և ռէֆօրմ։ 5) Դաշնակցութիւնը և Տաճկահայ դատը։ 6) Դաշնակցութիւնը և Ռուսաստանի սօցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը։ Բացի այս, ժամանակի սղութեան և այլ անակնկալ պատճառներով չը կարդացուեցին՝ 1) Սօցիալիզմի սուբիէկտիւ և օբիէկտիւ հիմնաւորումը. 2) Դաշնակցութիւնը և Պարսկահայերը։—Բոլոր նիւթերին շատ կանոնաւոր կերպով ներկայ էին լինում բացի պատգամաւորներից նաև շուրջ 25 ունկնդիր ընկերներ։

Համագումարը ցրուեց գոհ և յուսալից, համոզուած, որ յաջորդ համագումարին ընկերները իրար կը հանդիպին աւելի թուաւոր և աւելի հարուստ տեղեկութիւններով տեղական գործունէութեան մասին։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ

Սուլթանը պատժեց կարնոյ շարժումների հեղինակներին. մօտ 90 հոգի, բոլորը տաճիկներ՝ դատապարտուեցին, ոմանք մահուան (8 հոգի), ուրիշները ցմահ բերդարգելութեան (18 հոգի), ուրիշները 3, 5, 10, 15 տարուայ բանտարկութեան։ Խիզախ էր հարուածը, անսպասելի... Առաջին մասսային դատավճիռն էր և այնքան անողորմ... մուսուլման խալիֆականների համար. անշուշտ խալիֆը գտել էր, որ իր երբեմնի հաւատարիմ հօտը միանգամայն շեղուել է ուղիղ ճանապարհից և որ անհրաժեշտ է խեղդել „ըմբոստացումը“ հէնց խանձարուրի մէջ։

Դրա համար և հրահանգել էր խիստ, ցնցող պատիժ... Ի՞նչ հետևանք կունենայ ըէակցիայի այդ հարուածը։ Մեղկ ու տակաւին անդաստիարակ տարրերը, թերևս կ'ահաբեկուին և գետնատարած նորէն կերկրպագեն փադիշահին ու նրա գիշատիչ գործակալներին։ Բայց նոյնիսկ այդ տարրերի վերաբերմամբ ահն ու սարսափը երկարատև գրաւականներ չեն հաւատարմութեան։ Ջոհերի անթիւ համախոհները կան, որոնք չեն հանգստանայ և ոխ կը պահեն իրենց սրտերում, ատելութիւնը միշտ աւելի սաստկութեամբ կարծարծուի յեղափոխական արեան հոտն առած ժողովրդի մէջ և շուտով նորէն կը գայ արդար հատուցման օրը...։ Թիւրք ժողովուրդը մտել է արդէն կարմիր ճանապարհը, նա ևս տուեց իր մասսային հարկը տիեզերական ըէակցիայի անկշտում Մողոքին. Նրա նահատակները այսօր խմբերով գնում են քաւելու... Ողջո՜յն նրանց։ Առաջին խմբական այդ նահատակութիւնը լաւագոյն սնունդը կը լինի ապստամբական հրդեհի, որ կը բորբոքուի վաղ թէ ուշ նոր գաղափարական զինուորների անձնուրաց ջանքերով։ Ողջո՜յն թիւրք յեղափոխական դատապարտեալներին։

ԱՊՏԻՒԼ ՀԱՄԻՏԻ ԲԱՆԸ-ԳՈՐԾԸ

Հետեւեալը պատճէնն է 31 յունուար 1908 թուակիր պաշտօնական շրջաբերականի մը որ ոստիկանական նախարարութիւնը հաղորդած է նահանգներու կեդր. վարչութիւններուն։

„Ինչպէս առաջ և յետոյ ձեզի հաղորդուած էր կայս. իրադէ մը՝ որ կարգիլէր Օսմ. երկիրներու մէջ վնասակար գրութիւններու մուտքը և տարածուիլը։

Ներքին գործոց նախարարութեան մէկ թէզքէրէն կրկին կը յանձնարարէր որ համաձայն կայսերական իրադէի ամէն տեսակ զգուշութիւններ, և աւելի քան երբէք ջանք ու խնամք ի գործ դրուին որպէսզի վնասակար թերթեր մուտք չը գտնեն երկիր, և այս մասին ձեռք առնուած ամէն միջոց պարբերաբար հաղորդուի իրեն։

Համաձայն կայսերական իրադէի և ներքին գործոց նախարարութեան շրջաբերականին, պարտաւոր էք աչալուրջ հսկողութիւն և խիստ ուշադրութիւն դարձնել, որպէսզի ոչ մէկ վնասակար գրութիւն ներս չը մտնէ և այս մասին ձեռք առնուած միջոցները պարբերաբար մեզի հաղորդելին։

⁂

Երկրորդ շրջաբերական,

„Փարիզ հրատարակուած „Իլլարասիօն" (Տէկլարասիօն ?) անուն կրող ցնդաբանութիւնը այս օրերը Փարիզէն և Մարսէյլէն Օսմ. նահանգներու Փրանսական հիւպատոսներու անուան նամակի ձևով կը ղրկւի։ Ուստի պէտք է աշխատիլ որ այս ցնդաբանութիւնը չը մտնէ երկիր և չը տարածուի։

Նոյնպէս կայս. իրատէի մը համաձայն Լոնդոն հրատարակւող „The Illustrated London News" պատկերազարդ թերթի 18 յունուար 1908 թիւը կայս. երկիրներու մէջ մուտքը ու տարածուիլը արգիլուած ըլլալով, անոր վնասակար պարունակութեան պատճառով, մտած համարները պէտք է ղրկուին։

Ներքին գործոց նախարարութիւնը յիշեալ բարձրագոյն իրատէի գործադրութիւնը շրջաբերականով մը պէտք եղած տեղերը հաղորդած է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼՕ-ԹԻՒՐՔ — Երիտասարդ Իտալիան հետզհետէ կը շեշտէ իր ինքնուրոյնութիւնը քաղաքական և տնտեսական հողին վրայ նետուած է թրքական արկածախնդրութեան մէջ, ուր կը ջանայ իր տնտեսական և բարոյական ազդեցութիւնը ընդլայնել, մանաւանդ այն օրէն իվեր, երբ Ֆրանսա Իտալիայի կաթոլիկ միսիօնարներու դարաւոր պաշտպանութեան հոգը յանձնեց Իտալիային։ Թիւրքիան՝ այժմ գործունէութեան դաշտը կը հանդիսանայ Եւրոպայի պետութիւններուն, որոնք կարծես յուսավրէպ Ծայր Արևելքէն, ուր աւելի հզօր ազդեր երևան կուգան, կը հրօսեն կոթը փրթած Թիւրքիոյ վրայ, ինչպէս արծիւները լէշերուն վրայ։

Իտալիան Եւրոպայի հակառակորդ պետութիւններուն մէջ բացառիկ և „մէջումէջ" դեր մը կը խաղայ, իբր հաւասարակշռութեան ազդակ մը, այնպէս որ Մաքիավէլլի երկիրը, օգտուելով իր նպաստաւոր դրութենէն, կը ջանայ դրստել իր գործերը Մօտիկ Արևելքի, Ալպանիոյ և Տրիպօլիսի մէջ։

Շատ չըներ Իտալիոյ և Թիւրքիոյ վեհապետները իրարու ճիլվէներ կընէին, ընծաներ ուղարկելով։ Մէկը միւսը կուզէր խաբել։ Իտալիան ուզեց Թիւրքիոյ մէջ իրեն առանձին վեց նամակատուն բանալ, սուլթանը մերժեց։ Այս միջադէպին շուրջ կային և յարակից դէպքեր։ Իտալիա ստիպուեցաւ դիմել կտրուկ միջոցին, „վերջին պատճառաբանութեան",—թնդանօթին։

Իտալական ստուար և անսովոր նաւատորմ մը ապրիլ 18-ին ճամբայ ելաւ դէպի թրքական ջրերը վեց կղզի գրաւելու և սուլթանը ուշքի բերելու համար, ինչպէս նաև Արևելքի մէջ, իտալական զօրութիւնը և հմայքը պատկառելի ընելու համար։ Իտալիոյ ազգային զգացումը ծափահարեց իրենց երիտասարդ նաւատորմին խոյանքը՝ որ կը սուրար Իտալիոյ իրաւունքը և արժանապատուութիւնը պաշտպանելու։ Սօցիալիստները խանդավառութեան հանդէսներ սարքեցին այդ առթիւ. կարծես Տ'Անունցիօի տաղմին „Նաւն" էր որ „կը զինէր իր ցռուկը և կառադաստէր դէպի յաղթութիւնները": Կարիպալդիի անմահ հոգին բոցէ մը նորէն սաւառնեցաւ և հրահրեց Իտալիան ուր քնարի թելերը և սրտերը յաւիտենական թրթռումները ունին։

Սուլթանը ամա՛ն ըսաւ, և իսկոյնեթ գոհացում տուաւ Իտալիոյ։ Իտալիա կեցուց իր նաւերուն թափը՝ բայց առանց զինաթափ ընելու, չուզելով հաւատալ „տարտամ" խոստումներուն, որոնց մէջ Ապտիւլ Համիտ այնքան վարպետ և այնքան փիճն է։

Որովհետև այդ անսպասելի և մեռելածին ցոյցը, զուգադիպեցաւ, Կիյօմի և Պիւլօվի Իտալիա այցելութեան պահուն, թիւրքերը ապշած կը հարցնեն,—ո՞ւր մնաց Գերմանիոյ բարեկամութիւնը, որ իր դաշնակցին չկրնար խօսք հասկցնել։ Ալլահը բարեկամներէն պահէ, գերմանական թերթերը ևս կը ցաւին այդ զուգադիպութեան վրայ։ Բայց չեն ուշանար բալասան քսել վէրքին վրայ՝ տարփողելով որ Պօլսոյ իրենց դեսպանին կը պարտին „խաղաղ լուծումը" խնդրին։

Հանելուկ մը կը մնայ այս կատակերգութիւնը և Գերմանիոյ „պարկեշտ միջնորդի" դերը, որը Կիյօմ կը խաղայ Թիւրքիոյ դժբախտ ճակատագրին շուրջը բարեկամօրէն ծծելով թիւրք ժողովրդի արիւնը և ծուծը և մեծ „գործաւորը" և պատճառը ըլլալով անոր քայքայումին, դժբախտութեան և անիշխանական դրութեան։

Եւրոպական կարևոր թերթ մը հետևեալ խորհրդածութիւնը կընէ իտալական նաւային ցոյցին առթիւ. „Անտարակոյս Իտալիան իրաւունք ունի, բայց ցաւալի է որ այս բանի կերպը կը ծառայէ միմիայն նիւթական և դրամական շահեր ձեռք բերելու. հէնց որ կարգը կուգայ հարստահարուած, կոտորուած քրիստոնեաներուն, տէրութիւնները կը դիմեն քաղաքավարի նօթաներու և դիւանագիտական անազդու միջոցներու":

ԹԻՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ.— Թիւրք-պարսկական կռիւը սանձարձակ թալանումի, գազանութիւններու ահռելի ցուցադրութիւն մըն է։ Թիւրքերը մտնելով այդ գաւառը, որ Ատրպատականի էն գեղեցիկ վայրն է իր խիւաններով—երկար ծառուղիներով, այգեստաններով և ամարաթներով, աւերակ ըրին և թող տուին ու քիւրդերը, ինչպէս հին թաթարական հօրտաներու հետևող խուլիկանները, ջարդեն, կողոպտեն և ամայացնեն Ջրադաշտի ծննդավայրը։ Ցարդ ամէն գազանութեան պատրաստ ցեղերը, սպաննած են 2000 մարդ, թալանած և աւերած են 36 գիւղ և գերի բռնած 2000 կին և երեխայ, անգութ չարչարանքնե-

րու մատնելով զանոնք։ Դժբախտ և անտէր ժողովուրդը ահուսարափի մատնուած, լեղապատառ կը փախչի գազան մարդկութեան առջևէն, վայրագ մահը ակներև տեսնելով աչին առջև։ Պարսիկ կառավարութիւնը անպէտ և անզօր է պաշտպանելութեան հասնիլ գազանութեան ճիրաններու մէջ հոգևարող հպատակներուն։ Պարսիկ սերվազները, շատ յօժարակամ չեն երևիր օգնութեան փութալու, որոնք յաճախ դասալիք կըլլան կէս ճամբէն։ Թէհրանէն որոշուեր է 10000 զօրք ղրկել, քրդերը զսպելու համար, բայց ե՞րբ և ի՞նչպէս։ Արդէն երկիւղ կայ որ ապստամբներուն կողմը կանցնին։

Թիւրք կառավարութիւնը միայն ընդունակ է, այնքան բնազդօրէն և արեւստագէտօրէն, խաղաղ և անպաշտպան ժողովուրդներու դէմ, արիւնռուշտ խրախճանքներ սարքել։

Քրդերու շահատակութիւնները օրօրի ահարկու ծուալ կստանան, Թիւրք զօրքերու հովանաւորութեան տակ և կը յառաջանան մինչև Սալմաստի գաւառը։

Թիւրք-պարսկական վէճը վերջանալու յոյս չը ներշնչեր, և Թիւրքերը մտադիր չեն երևիր ձգել իրենց գողացած մասը, բայց կը նախազգան որ Ռուսաստանը օգտուելով սահմանագծի վէճի ձգձգումէն, կարող է գրաւել Պարսկաստանի հիւս. մասերը։

Պարսկական Գարատաղի սահմանագլխին վրայ Պէլէսվարի մօտ, պատահած ընդհարումը, պարսիկ աւազակ խումբերու և ռուս պահակներու միջև, ուրիշ տուաւ Ռուսիոյ ուժ կեդրոնացնել այդ վայրերը և յառաջանալ 12 քիլօմէտր Պարսից հողին վրայ։ Մէճլիսը բողոքեց այդ ոտիկանութեան և ռուսներու արարքներուն դէմ. բայց այդ բողոքը պլատօնական սահմանը չանցնիր, երկիրը անզօր և կազմալոյծ վիճակի մէջ ոչ մէկ միջոց և հաստատ կուան չունի ինքնապաշտպանութեան։

Մէճլիսը՝ բոլոր բարի և գովելի տրամադրութիւններով Պարսկաստանը փրկելու համար, չկրնար իրաց խառնաշփոթ վիճակին, անմիջական և ազդու դարման մը տանիլ։ Եւ մեղք որ այդպիսի „խորհրդարան“ մը, խանդավառ և ազատամիտ, յուսահատօրէն անկերպարան երկրի մը հանդէպ կը գտնուի։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Դաւաճան Ղասըմ բէկը որ 40 զօրամներով հայ գիւղերը կը շրջէր յեղափոխական դտնելու պարբակով և ամէն դազանութիւն ու բռնաբարութիւններ իգործ կը դնէր, չաբաչը սպաննուած է և իր գիւղը քարուքանդ եղած։ Փոխարէն կառավարութիւնը աւերած է երկու հայ գիւղեր։

—

Տաճիկ կառավարութիւնը խստութիւններ սկսեր Թիւրք պարսկական սահմանագծի շուրջը բնակող մէկ քանի քիւրդ ցեղապետներու վերաբերմամբ, որոնց մէկ քանին ձերբակալուած և դատի ենթարկուած են եբր Հ. Յ. Դաշնակցութեան նպաստողներ։

—

Էրզրումի միսիւլմանները խիստ դժգոհ ոստիկանութեան կողմէ վերջի շարժման պարագլուխներու դէմ գործ դրուած անզգթութիւններուն համար դիմած են մեծ վէճերին արդարութիւն պահանջելով ոստիկանութեան զոհերուն համար։ Եթէ կառավարութիւնը աւելի մարդասէր միջոցներ չը հրամայէ, կարող է ապստամբութիւն ծագիլ։

Վանի հիւպատոսները և ռուսական ու ֆրանսական դեսպանները պահանջած են ձերբակալել և պատժել Վանի կոտորածին առաջնորդները և մասնակիցները։ Ոչ մէկ յանցաւոր չէ ձերբակալած կառավարութիւնը, ոպաննուած են 60 հայ և 50 հոգի վիրաւոր և անհետացած։

Ձերբակալուած են ս. Գրիգոր վանքի հոգաբարձութեան քանի մը անդամները։

—

Տ հերցի դաւաճան Դաւիթը յեղափոխականներու կողմէն ստացած վերքէն սատկեր է։

—

Հրաման եղած է նոր զօրք ղրկել Վան, ուր դրութիւնը սպառնական է։ Քրիստոնեաներու խանութները և շտիան փակ են։ Զինուորական բարձր պաշտօնեաներ ինչպէս նաև վաչին իրենց ընտանիքները կը ճամբեն Պոլիս, Իզմիր։

Վանայ ծովին համար մարտանաւակ մը կը փոխադրի Պոլսէն մասմաս։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ՏԵՐՐՕՐ

1908 մարտի 22-ին Հ. Յ. Դաշնակցութեան Կ. կոմիտէի որոշմամբ տերրօրի ենթարկեցաւ Նախիջևան գաւառի հաչիվար գիւղացի Թաչատուր Եղիազարեանը — իր հակայեղափոխական դաւաճան գործունէութեան համար։

Ա հ ա բ ե կ ի չ ը ա զ ա տ է։

Սրանով վերստին յայտարարում ենք ու զգուշացնում բոլոր այն անձնաւորութիւններին, որոնք գործիք են դարձել կառավարութեան ձեռքում Հ. Յեղափոխութիւնը ճնշելու, յետ կենան իրենց ստոր դերից։

Հ. Յ. Դ. III Կ. ԿՕՄԻՏԷ

1908 մարտ 30

ՆԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Թիւրքիոյ ստացած է՝

Զ ա ր ի գ ե ր ի ա.—Բէրն՝ or. Էլլէնից 50 ֆր.։
Կ ի պ ր ո ս.—Լիմասոլ՝ Փ.էն 1 անգլ. ոսկի՝ ֆր. 24. 80։
Գումար 74 ֆրանկ 80 սանտ.։

Արեւելեան Թիւրքիոյ Ենթակոմիտէ՝

1906, յունիս 18-էն մինչեւ 1907 փետրուար 12։ 21 օրացոյցի վինակոմանուրիւն 105 դրս.. Շաբէ խումբի վինակոման. 619. 50, Խոզանդաղ խումբի վինակոման. 100, նոյն վինակոման. զէնքի համար 50. Փայլակ խմբի վինակոման. 48, Հանգանակութիւն or. Թ-ի ուսանուրին 135. 50, Շաբէ խումբի միջոցաւ Մ. կ-ի հարսանիքին 577. 50, Խանասորի հանդիսին 590, Շաբէ խումբի միջոցաւ Մօսինի հարսանիքին 217, նոյն խմբի միջոցաւ or. Թ-ի հարսանիքին 268. 50, Նէրսեր Վ. Վ-է 247. 50, Մ. Թ-է 100, Ն. Ա-է 70, Ն. Գ-է 75, Դրացիէ 80, Մնացականէ 5, Շաղէ 48. 70, Այլակ խումբի միջոցաւ Կ. Զ-է 5, Արմէնէ 10, Պեան եղբարք 20, Ն. Ա-է 8, Կ. Զ-է 10, Փեան 10, Ա-Թ-եանէ 20, Կայծակէ 10, Յովհաննէս է 5, Անյայտացած զէնքի համար Ա. Մ-է 195, խումբերէն՝ Յառաջ՝ մայիսէն—հոկտ. 887, Փայլակ եպտ. հոկտ 130, Շաբէ սեպտ—հոկտ 165, Խոզանդաղ սպրիլէն—նոյեմբեր 488, Կայծակ սեպտ. հոկտ. նոյ. 141, Փոթորիկ հոկտ. 13։ Գումար 5454. դրս. ոսկ եւ 20 փարա։

13 սեպտ. 1907-էն մինչեւ 26 յունուար 1907։ Հեռեւեալ խումբերէն՝ Խոզան Տաղ 289 դրս. ոսկ, Սերոբ փաշայ 852, Թռուցիկ 146, Շաբէ 75, Փոթորիկ 169, Ռազմիկ 521, Խրախոյս Բոյրեր 48, Արուսեակ (ի Թանքա) 270, Զանգ 50, Շաբէ խումբի. հանդէսէն 1625. 5, Խրախոյս Բոյրեր խումբին հանդէսէն 30, Ներկայացումէ 2490, Ա. Բ. Գ-էն 97. 5, Բժիշկ Ա-էն 20, Յ-էն 10, Բ-էն 9։ Գումար 6312 դրս. ոսկ։

Դամիրէի Ենթակոմիտէն՝

1907 հոկտ. դեկտ. 31։ Ա. Պ-ի ձեռամբ Անանիս խումբէն ամասվնար 240 դոնկ. Արմեն-Վանենիի ձեռամբ Զարթիր խումբէն 125, Աշոտ Երկաթի ձեռամբ Կորիւն խումբէն 100, Տ. Թում. ձեռամբ Բազէն խումբէ 20։ Ընդամենը 485 դոնկ. ոսկ։

ՎԻՊԱԿ.—„Դրօշակի“ 2-րդ համարի մէջ հրատարակեալ Ամերիկայի կոմիտէներու հասոյթի մէջ մուտ զատ են սխալներ, որոնք պէտք է ուղղել հետեւեալ կերպով՝ Կրանիթ Սիթի դոլար 375 30, Հէմիլթոն 350, Նիւարիորք 300, Թրոյի Տիկնանց 300. Լօրենս 265, Ռիչմոնտ 194. 62, Հէյվրհիլ 134. 75, Կրանտ Ռէփիտս 43. 55։ Ընդամ. գումար 13643 դոլար եւ. 54 սենթ։